



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15931

321.9 196
2 - 45



գ. 2 եթով

66

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ

ԲԱՆԻՈՐԸ

Ա Ր Պ Ե Ս

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ

ԹԱՐԳՄ. ԱՐԻՍՏԵՐԵՆԻՑ Լ. Ն.

ԳՐԱԴԱՐԱՆ Հ 15 Կ 0 Պ.

Թ Ե Յ Լ Ե Զ

1906

26 SEP 2006

321.9
9-45

Գ. 26 Բ 604

15 JAN 2010

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԲԱՆԻՈՐԸ

Ա Բ Պ Պ է Ս

ՏՆՏԵՍՍՎԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ Լ. Ն.

Թ. Ի Ֆ Լ Ի Զ
Էլեմենտար այ ժամկ ՀԵՐՄԱԿԱ Ընկ. Մադարեան փող. № 5
1906
(169)

17.07.2013

15951

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԲԱՆԻՈՐԸ

Եօթանասնական թւականներին ոռւսաց գրականութեան
մէջ յարուցւած էր մի լայն սկզբունք, որը՝ դրւած լինելով այն
ժամանակւայ հասարակական աշխարհայեցողութեան անկիւնի
գագաթում, ամեն բան իրենով էր գունաւորում, ամեն բանի
վրայ իր գաղափարական բովանդակութեան կնիքն էր դնում:
Այդ գեկագարող սկզբունքը տալիս էր ժամանակակից առաջա-
դէմ ուղղութեանը այն հիմնական տեսակէտը, որից պիտի լու-
սարանւէին կեանքի երևոյթները: Նա այն կարմիր թելն էր,
որ անցնում էր այն ժամանակւայ առաջադէմ մարդկանց աշ-
խարհայեցողութեան միջով և նրանց բոլոր առանձին ձգտում-
ները, համոզմունքները, համակրանքներն ու հակակրանքները
միացնում գարձնում էր մի վայելուչ, ամբողջական շէնք:

Անձի շահերը, կամ աւելի կօնկրէտ ասելով՝ աշխատանքի
շահերը, կամ աւելի ևս կօնկրէտ՝ ժողովրդի—իբրև աշխատա-
ւոր գասակարգերի մի միութեան շահերը—այս էր ահա յի-
շեալ սկզբունքի ներքին բովանդակութիւնը:

Անձի շահերի տեսակէտից, որի աղատութիւնը, ինքնու-
րոյնութիւնը, ակտիւ գործունէութիւնն ու բախտաւորութիւնը
հնարաւոր են միայն այնպիսի պայմաններում, երբ նրա բոլոր
ոյժերը և ընդունակութիւնները զարգանում են ներդաշնակօրէն,
—այդ իսկ անձի շահերի տեսակէտիցն էր այսպէս կամ այն-
պէս գնահատում այն ամենի նշանակութիւնը, ինչ որ կանգ-
նած էր կամ աշխատում էին զնել այդ անձից բարձր: Հասա-
րակութեան, ազգութեան, հայրենիքի, ընտանիքի, պետութեան
գաղափարները ստացման նոր լուսարանութիւն այն թէօրիայի
տեսակէտից, որ կոչւում է «կոիւ անհատականութեան համար»:



21895-59

բոցաշխահի

Արսօլիւտ արդարութիւնը, գիտութիւնը գիտութեան համար, գեղարեսար գեղարեսարի համար, անպայման գիտութիւնը—այս ամենը իշեցւած էր հին պատւանդաններից ու մի նոր դերի կոչւած, այն է՝ ծառայելու անհատի զարգացման ու արժանաւորութեանը հէց նոյն «անհատականութեան կուի» փշոտ ճանապարհի վրայ:

Բայց այդ ներդաշնակ զարգացման իրականացումը, մարդու մէջ նիրհող ոյժերի և ընդունակութիւնների իսկական զարգացումն ու արտայայտութիւնը մի բանում է միայն կայանում; այն է՝ վարդութեան, աշխատանքի մէջ։ Առանց վարժելու, առանց աշխատելու մարդու ոյժերը հիւծում, կորցնում են իրենց դերը կատարելու ընդունակութիւնը. միւնոյն ժամանակ, երբ այդ աշխատանքը լինում է միակողմանի, դրանք է լինում անբնական պայմանների մէջ,—մարդու մի քանի ընդունակութիւնները հիւծում են, իսկ միւսները, ընդհակառակը, համում անբնական, չափազանց զարգացման։ Կարճ, առաջանում է մի քանի ընդունակութիւնների ատրոֆիա (նւպում): միւսների՝ հիպերտրոֆիա (չափազանց աճում): Մաքրել ճամբան նպատակայարմար ու կանոնաւոր աշխատանքի համար, ապահովել նրա նօրմալ բնական գործունէութիւնը, ստեղծել նրա համար նօրմալ պայմաններ, մի խօսքով՝ հովանաւորել պաշտպանել աշխատանքի շահերը—ահա այն գործնական խընդուրը, որ թելադրել է «անհատականութեան կուի» թէօրիան։ Աշխատանքն ու զարգացումը միւնոյն մեղալի երմանի կու երեսներն են։ Մարդու ընդունակութիւնը՝ բազմակողմանի կերպով զարգանալ աշխատանքի մէջ և աշխատանքի միջոցով միւս անհատների հետ միասին, նրանց և իր կան, գուտմարդկային գիծը, անհատականութեան ձգտումը, իր հովանաւորութեան տակի, էր առել նոր թէօրիան։ Եւ ասծ իրեն միակը, որին կատարելապէս սագում է համամարդշնուր մենաշնորհն, ոչ մի առաջարկային անունը։ Աշխատանքի շահերը չէին ստեղծում ոչ մի միւնոյն ժամանակ այդ ձգտումը, այդ անդենցն էր ճանաչելային անունը։ Աշխատանքի շահերը չէին ստեղծում ոչ մի միւնաշնորհ, ոչ մի արտօնութիւն, ոչ մի անարդար բարձութիւն մարդկութեան մէջ։ Աշխատելու ընդունակութիւնը

յատուկ է ամեն մէկին։ Բնական, բազմակողմանի աշխատանքի մէջն է անհատի զարգացման, նրա ինքնուրոյնութեան և երջանկութեան գրաւականը։ Այսպէս ուրիմն, անձի շահերը, ձեւակերպւած լինելով աւելի կօնկրէտ, յանգում էին աշխատանքի շահերին։

Աշխատանքի շահերը, աւելի ևս կօնկրէտ ձեւակերպւումով, նոյնացում էին այդ աշխատանքը կատարող կենդանի մարդկանց շահերի հետ։ Այդ չէր նշանակում—փոխարինել լայն համամարդկային հասկացողութիւնը, նրա տեղ աւելի նեղը դնելով։ Այդ չէր նշանակում ջոկել ու առանձին դնել մի որեւ սահմանափակ խումբ—դաս կամ դասակարգ—իր յատուկ բացադիր շահերով։ Այդ մի պարզ, կենսական անհրաժեշտութիւն էր։ Կուելով մի որոշ գաղափարի, որոշ սկզբունքի համար, մարդ ստիպւած է լինում անհրաժեշտորէն կուելու նրանց կօնկրէտ մարմնացման համար։ Պաշտպանելով աշխատանքի շահերը, անհրաժեշտ է պաշտպանել այդ աշխատանքը կրող կենդանի մարդկանց, բայց պաշտպանել ոչ աւելի և ոչ պակաս, քան այդ կրողներին։ Եւ միայն այն չափով, որ չափով անհատը—լինի նաև զգինոր, վաճառական կամ հովիւ—ներկայանում է իրբն մարմնացում աշխատանքի, նաև իրաւունք ունի իր շահերի պաշտպանութեան։ Միւնոյն ժամանակ մի անհատ իր շահերով կարող է լինել աւելի կամ պակաս մաքուր մարմնացում այդ կատէզօրիայի—աշխատանքի, աւելի կամ պակաս աղատ այլ շերտաւորումներից։ Ուսուցիչը, փաստաբանը, աստիճանաւորը, արհեստաւորը վաճառականը, զինւորը—դըրանք նոյնպէս որոշ տեսակէտից աշխատաւոր մարդկի են, ուրիմն դրանք ևս իրենց էռութեան մի կողմով մտնում են «ժողովուրդ», որպէս աշխատող դասակարգերի ամբողջութիւն» գաղափարի մէջ։ Բայց նրանց այդ կողմին միանում է մի ուրիշը, որով նրանք, ընդհակառակը, գուրս են գալիս, բաժանում են «ժողովուրդ» հասկացողութիւնից։ Եւ հասկանալի է, որ ինչքան աւելի են միանում հասարակական այս կամ այն խմբի շահերը աշխատանքի շահերին, այնքան աւելի են արժանի նրանք՝ անհատականութեան կուի տեսակէտից՝ դրական վերաբերմունքի և հակառակը—որքան քիչ են նմանում այդ խմբի

շահերը աշխատանքի շահերին, որքան աւելի են բաժանւում՝ նրանք վերջիններից, այնքան աւելի են արժանի նրանք բաշասական վերաբերմնաքի:

Որովհետև պատմական այն մօմէնտի համար, որին վերաբերում է վերևում ասածը, աշխատանքի բոլոր այլ ձևերը ըստ իրենց քանակի միանգամայն կորչում էին գիւղացիութեան ահագին հասարակ մասսայի աշխատանքի մէջ, ուստի հէնց այդ հասարակական խմբի, այսինքն գիւղացիութեան այդ մասսայի շահերը գրաւեցին առաջնակարգ տեղը «եօթանամնական թւականների մարդկանց» աշխարհայեցողութեան մէջ։ Այդ աշխարհայեցողութիւնը ինքն ըստ ինքեան բաւական լայն էր, որպէս զի կարողանար գործադրւել կեանքի ամեն տեսակ փոփոխող պայմանների վերաբերմամբ, Դնել առաջին տեղը գիւղացիութիւնը, անմիջական արտադրողների այդ դասակարգը, որոնք դեռ տէր էին արտադրութեան միջոցների, դեռ անջատած չէին վերջիններից, — վարել այդպէս հարկադրում էր ոչ թէ թէօրիան, ոչ թէ այս կամ այն վերացական, արստրակտ դիտողութիւնը, այլ ինքը կեանքը, նրա ներկայ րօպէի շօշպելի կօնկրէտ բովանդակութիւնը։ Եւ ըստ ինքեան հասկանալի է, որ գիւղացիութիւնն ընդունւում էր այստեղ ոչ թէ իրրե դասին միութիւն, ոչ թէ իրրե մի կուլտուրական խումբ, այլ իրրե մի աշխատաւոր մասսա և այն չափով, որ չափով նահնդիսանում էր իրրե մի այդպիսի մասսա։

Այդ էր այն համաչափ, վայելուչ հասարակական աշխարհայեցողութիւնը, որը հրապարակ էր հանւել 70-ական թւականների սուս ինտելիգինցիայի կողմից, այդ էր «Օтечественные Записки» հանդէսի աշխարհայեցողութիւնը, որ փայլում էր ներկասիկի, Շչերբինի, Ելիսէնի, Ուսպէնսկու, Միխայլովսկու անուններով... ինքն ըստ իրքեան հասկանալի է, որ նա չէր կարող ունենալ մի առանձին բարեկամական ընդունելութիւն այն ժամանակայ գրականութեան մէջ։ Նրա որոշութիւնն ու համար բազմաթիւ թշնամիներ։ Բայց նա ոյժ էր, հզօր գաղական ոյժ, որը շատերը կարող էին ատել բայց որին չէր լուսական վագակարել որոշ չափով չը հպատակւել։ Ի սարսափ սուսական-

«աղնւազարմ» գրականութեան՝ նրա մէջ ամենուրեք «փչեց մուժիկի հոտը»... Խուսական կեանքն այնպէս էր դասաւորեւ, որ չէր կարող՝ իրրե հակադրութիւն այդ նոր գաղափարական ուղղութեան՝ առաջ մզել մի ուրիշը, որ կարող լինէր «մտքի ասպարէզում» գոնէ որոշ չափով մարտնչել առաջինի հետ Բոլոր հոսանքները — կամաւոր թէ ակամայ — ստիպւած էին համակերպել այդ նոր ուղղութեանը, երգել — անկեղծ թէ կեղծ — նրա հետ միաձայն։ «Փողովուրդը» որոշ չափով գունաւորեց իրենով հետզհետէ նոյն իսկ «Ենտուք Եվրոպ» ամսագրի ծանրաբոյ «արևմտականութիւնը». «Ժողովուրդ» խօսքն արձանագրեց իր դրօշի վրայ՝ իրրե մի միասիկական կուռք՝ և «Նեֆլյա» հանդէսը, որն արգէն սկսել էր «Ժողովրդականութիւն անել» (արօնություն)։ «Ժողովրդի» կողքիցը կպչել էին փորձում՝ այս կամ այն կողմից՝ և զանազան խաւարամիտներ, շտապ ներկելով նոր գոյնով հին սլաւոնասիրական դրօշի խունցած ցնցոտիները։ Վերջապէս լոյս ընկատ նոյն իսկ հոչակաւոր շնծու «Ժողովրդական քաղաքականութիւնը»...

Այդ բոլորն անցել է այժմ աւանդութիւնների շրջանը։ Եւ 80-ական թւականների ծանր ճգնաժամը, և 90-ականների ազահ արշաւումը նոր գրօշների յետելից, և ներկայիս մտաւոր ցիրուցանութիւնը՝ մի միութիւն, համաձայնութիւն ստեղծելու կարիքի հետ միասին, որը հետզհետէ աճում է, բայց դեռ տիրաբար խօսք չէ հնչեցրել իր գոյութեան մասին, — այդ բոլոր հանգամանքներն ազատեցին զանազան գրական չարչութիւններ սրանց համար ծանր ու անհամապատասխան պարտից, այնէ ինչ որ գաղափարական ցուցանակների յետեւում թագնւելու պարտականութիւնից։ Խաւարամիտները բացարձակալիքն իրենց խաւարամիտ յայտարարեցին։ «Նեֆլյա»-ն, որ մի ժամանակ այնպէս եռանդավ աշխատում էր «Ժողովրդականութիւն անելու» մէջ բոլոր ժողովրդականներիցն էլ (արօնություն) առաջ անցնել, քաջարար յայտարարեց «մանր գործերի», «լուսաւոր երևոյթների» և «իրականութեան հետ հաշաւելու» թէօրիան։ «Ժողովրդական քաղաքականութիւն» խօսքն իսկ այնպէս էլ շուտ գետնի տակն անցաւ, ինչպէս էլ լոյս աշխարհ էր ընկել որոշ դէպքերի աղդեցութեան շնորհիւ։ Կորուսալ, իհար-

Ցէ, մեծ չէ, և դրա համար լացելու բոլորովին կարիք չկայ. բայց այդ ամենը—փոքրիկ նշաններ, փոքրիկ սիմպոմներ են մի ինչ որ մեծ բանի, և ամենից առաջ՝ ոռւսական գրականութեան առաջաւոր շաբքերում տիրող գաղափարական ցրւածութեան:

Եօթանամական թւականների հին, փառաւոր դրօշը, որ բերեց մինչև մեր օրերը հասցրեց այն շրջանի «մօգիկաններից վերջինը»՝ մօտերումս գերեզման իջած ն. կ. Միխայլօվսկին, այդ դրօշը, որը անազարտ էր դուրս եկել անցեալի բոլոր ընդհարութներից ու դժւարին մօմէնտներից, ներկայումս ենթարկում է քննադատութեան յարձակութների մի այլ կողմից: Ասում են, թէ «ժողովուրդը, իրոք աշխատաւոր գասակարգերի միութիւն» գաղափարը չէ կարող այլ ևս մնալ ներկայ աշխարհայեցողութեան անկիւնի գագաթում, թէ նա, այդ գաղափարը, չափազանց լայն ու անորոշ է, թէ նա պիտի փոխարին-ւի մի այլ գաղափարով, թէպէտ և աւելի նեղ, բայց աւելի որոշ, այն է «պրօլետարիատ» գաղափարով: Ամենահազին հասարակական խումբը, որ առաջաւայ «ժողովուրդ» հասկացողութեան մէջ բռնում էր կենդրօնական տեղը, այնէ՝ գիւղացիութիւնը, անմիջական արտադրող—երկրագործների այդ գասակարգը, միանդամայն յետ է մղում, դուրս է գցում... Դրական վերաբերմունքի արժանի են համարւում միայն աշխատանքի շահերը, որն արդէն անջատւած է արտադրելու միջոցներից. բոլոր միւս շահերն ընդունում են այն չափով, որ չափով որ զուգագիպւում են արտադրելու միջոցներից անջատւած աշխատանքի շահերի հետ, մաքուր պրօլէտարների շահերի հետ:

Իսկապէս հարկաւոր է այդ սրբագրութիւնը. իսկապէս հարկաւոր է գերադասել հին, լայն ձևակերպութիւն աւելի սահմանափակը: Մենք կը փորձենք տալ ներկայ գրւածքում ըստ հնարաւորութեան այդ հարցի պատասխանը, մանրամասնորէն հետազոտելով աւելի նեղ ձևակերպութիւնը կողմանկիցների պատճառաբանութիւնը, քննելով այդ քայլ քայլի յետեկից, ապացոյց ապացոյցի յետեկից: Այդ նոր տեսակէտը ամենից լիակատար, ընդարձակ դրւած և ամենից լաւ հիմաւորւած է կառւցկու

«Die Agrarfrage» (Ագրարային հարցը) գերմաներէն գրքի մէջ, որտեղ այդ խնդրին նուիրւած է մի յատուկ գլուխ «Bauer und Proletarier» (զիւղացին և բանւորը¹⁾): Կառւցկու հեղինակաւորութիւնն ու տաղանդաւորութիւնը, պատմելու կենդանութիւնն ու պարզութիւնը, նրա արտասովոր ընդունակութիւնը՝ դասաւորել համաշափ և զարգացնել սիստեմատիք կերպով իր ապացոյցները, ազգելով ընթերցողի մտքի վրայ ոչ միայն ներքին ոյժով, այլ և ամբողջ կառւցւածքի ամբողջականութեամբ և համաշափութեամբ,—այդ բոլոր ստիպում է մեզ կանգ առնել այդ գրքի վրայ ինչպէս մի լաւագոյն և կլասսիք օրինակի, որն ամենից աջող կերպով է պատճառաբանում վերոյիշեալ ձևակերպման սահմանափակումը:

Պրօլետարի և զիւղացու մէջ սկզբունքային տարբերութիւն գնելու ամենախիստ հակառակորդը Գերմանիայում Ֆօլմարն է: Նրա այդ հայեցքի հիմունքները շատ պարզ են: «Տնտեսութիւնների ընդհանուր թւից,—ասում է նա,—մօտաւորապէս ^{9/10-}ը մենք պիտի ինքնուրոյն, անկախ աշխատաւորակերերի²⁾ կարգին պատկանող համարենք, որոնք մշակում են իրենց հողը իրենց սեփական և իրենց տնայինների, իրենց ընտանիքի ձեռքի աշխատանքով: Այդ գիւղացիները տնտեսական մտքով զանազանուում են ներկայ պրօլետարիատից միայն նրանով, որ նրանք գեռ ունեն արտադրելու իրենց սեփական միջոցները: Բայց այդ «տէր լինելը», այդ սեփականութիւնը, որ հանգչուում է անկախ աշխատանքի միջոցների անբաժանելի անդամութեան վրայ, էապէս տարբերում է սեփականութեան կալիստական ձերից, որն ըստ իր էու-

1) Այդ գիրքը թարգմանւած է և ոռւսերէն:

2) «Ինքնուրոյն, անկախ աշխատանքուր—տէր» հասկացողութիւնը գերմաներէն աջող կերպով արտայայտում է Selbstwirtschafter բառով:

թեան հիմնւած է ուրիշի աշխատանքի շահագործման վրայ: Այդ գիւղացիների տանջանքները նոյնն են, ինչ որ վարձու բանուրներինը. և այդ տանջանքների պատճառները գտնւում են այն փաստի մէջ, որ կապիտալիստական շահագործութիւն աւելի ու աւելի է ներս խուժում գիւղատնտեսութեան շրջանը: Գիւղատնտեսութեան զուտ արդիւնքն աւելի ու աւելի է անցնում կապիտալի ձեռքը. հէնց գրանով գիւղացին իջնում է տէր-կապիտալի հասարակ կառավարչի կամ գործակատարի հարկատուի, ստրոկի աստիճանին»¹⁾: Այդպիսով, գիւղացիների և բանուրների մէջ եղող տարբերութիւնները, որոնք բաւական մեծ չափով սոսկ արտաքին, ձևական են, — այդ տարբերութիւնները թւում են ֆօլմարին փոքր կարեռութիւն ու նեցող. բայց էական է նրանց սօցիօգիտական, հասարակի տական տեղի նմննութիւնը ներկայ տնտեսական կազմի մէջ, այդ կազմի մէջ յարաբերաթիւնը դէպի նրանց կարիքներն ու պահանջները: Այդ պատճառով նա մի այլ տեղում ասում է, որ այն աշխարհայեցողութիւնը, որ նա բաժանում է իր ընկերների հետ, չը պիտի լինի «պոլտարիատի նեղ կուսակցական դօկտրին», «արդիւնաբերական վարձու բանուրների դօկտրին», այլ պիտի արտայայտի «ամբողջ աշխատաւոր ժողովրդի շահերն ու ձգտութմերը (des ganzen werktätigen Volkes):

Ճիշտ է, ֆօլմարը բերնշտայնական է, և նոյն իսկ գուցէ աւելի ուղիղ կը լինէր սաել, որ Բերնշտայնը «ֆօլմարական» է. սակայն ինչ վերաբերում է նրա վերոյիշեալ հայեացքին, այդ նոյն հայեացքը արտայայտած էր գրականութեան մէջ նոյնպէս և բերնշտայնականութեան ամենածայրացյեղ հակառակորդ հանդուցեալ լիբկնէխտի կողմից: Նա իր մի չը վերջացրած գրւածքի մէջ, որը նրա մահից յետոյ լոյս տեսաւ իր կուսակցութեան կենտրոնական օրգանի էջերում, իմիջի այլոց հետեւալն է ասում. «Բանուր դասակարգի դադափարը չը պիտի չափազանց նեղ հասկանալ... բանուր դասակարգ ասելով հասկանում ենք այն բոլորին, որոնք ապրում են բացա-

ուապէս կամ գլխաւորապէս իրենց սեփական աշխատանքի արդիւնքներով և որոնք չեն հարստանում սև աշխատանքի հաշով»: Իսկ ինչ վերաբերում է աշխատաւոր հասարակական իդէալին, նա՝ այդ իդէալը, «վերածւելով վարձու աշխատանքի պրօլետարիատին, անընդունակ է յաղթելու. բայց նրա յաղթութիւնն ապահովւած է, եթէ նա հասկացւած է աշխատաւոր ժողովրդի ամբողջութեան և ազգի ընտիր մասի, նրա մտաւոր և բարոյական տարբերի կողմից»:

Հայեացքների հէնց այս սիստեմի դէմ են ուղղւած կառւցկու պատճառաբանւած առարկութիւնները: «Զէ կարելի ժըխտել, — ասում է նա, — որ ներկայ տիպիքական գիւղացու բարութեան մակերևոյթը պրօլետարական և նոյն իսկ, կարելի է սաել՝ ենթապոլիտարական է. բայց գրանով գեռ չէ կարելի սաել, թէ նրա դասակարգային շահերը պրօլետարական են»: Մարդկանց միացնելը խմբերի մէջ, որոնք գիտակցում են իրենց շահերի ընդհանրութիւնը, բոլորովին չէ հանդիսանում որպէս մի հասարակ ֆունկցիա միանման ապահովութեան կամ անապահովութեան: Ոչ. իբրև հիմնական որոշող մօմենտ հանդիսանում է այստեղ միայն այս կամ այն անձանց գերը հիմնական տնտեսական սիստեմի մէջ, այն յարաբերութիւնները դէպի իրենց նմանները և դէպի օտարները, որոնք բղխում են հէնց այն դիրքից, որ նրանք ունեն արդիւնագործութեան մէջ, կարճ, հարկաւոր է որոշել, թէ ինչ կը նշանակեն գիւղացիութիւնն ու պրօլետարիատը, որպէս տնտեսական կատէզօրիանները: Որոնք են այն հիմնական տնտեսական յատկանիշները, որոնք թելազում են բանուրներին մի ընթացք, որ բնորոշում է նրանց, իբրև մի նոր տարր՝ համաշխարհային պատմութեան: Ունեն արդեօք այդ յատկանիշները գիւղացիներն էլ. եթէ ունեն, այն ժամանակ ակներեն է, որ ոչ մի հիմք չկայ հակագրելու միմիշանց գիւղացիներին ու պրօլետարներին, որպէս տարրեր դասակարգեր. եթէ չունեն, այն ժամանակ նոյնքան ակներեն է, որ գիւղացիները պիտի հասկանան իրենց շահերը բոլորովին ոչ այնպէս, ինչպէս վարձու բանուրները, և պիտի տեսնեն իրենց շահերը ոչ միենոյն բանում: Ելնելով այս տեսակէտից, կառւցկին փորձում է տալ այնպիսի որոշում՝

¹⁾ Տես նրա «Handbuch für Landtagswähler». Nürnberg
1899թ.

«պրոլետարիատին», որ գրան գիւղացիութիւնից բաժանող անդունդը պատկերանայ կարելին չափ ցայտում ու ակներև կերպով: Մենք կաշխատենք քայլ քայլի յետելից քննադատաբար հետազոտել նրա ամբողջ պատճառարանութիւնը:

Կառուցկին գտնում է ընդամենը չորս յատկանիշներ, որոնք բնորոշում են պրոլետարիատը, որպէս նոր ժամանակի մի առանձին տնտեսական կատէզօրիա:

I. «Ժամանակակից պրոլետարիատի առաջին յատկանիշը այն կարևոր գերն է, որ նա խաղում է արդիւնագործութեան մէջ: Նրա վրայ է հանգչում ներկայումս տիրապետող ամբողջ կապիտալիստական արդիւնագործութիւնը: Դրանով նա տարբերում է, ինչպէս երկինքը երկրից՝ հին և նոր ժամանակի Լուպենպրոլետարիատ» (նոտրագիրը՝ մերն է):

Նկատենք, նախ և առաջ, որ Կառուցկին աննկատելի կերպով սղմում է «ժամանակակից» պրոլետարիատ հասկացողուկու տեսակ նշանակութիւնից: Ակզրում Կառուցկին միայն խօսելիքը նա վերջացնում է նրանով, որ ներկայիս պրոլետարիատը ընդհանուր մասսայից զտում է «ժամանակակից» պրոլետարիատին՝ այդ բառի սուբիեկտիւ մտքով ու նշանակութեամբ. «ժամանակակից» ասելով՝ պիտի հասկանալ այստեղ օրինակ, կօնդօնի Լուպենպրոլետարիատ: Իսկապէս, միթէ, կը պատկանի առաջին տեսակի պրոլետարիատ: Իսկապէս, առաջին աստիճանում կը պատկանի առաջին աստիճանի շաբաթիւնից մէջ. միթէ առաջւայ տնտեսական կան երևոյթ՝ այդ տեսակի Լուպենպրոլետարիատ, ինչպէս նրան նկարապիտական արտադրութիւնը եղողները, վերջին գարի տիկաղութիւններում է. միթէ առաջւայ տնտեսական կան երևոյթ՝ այդ տեսակի Լուպենպրոլետարիատ, որը կազմում է նազան խաւերից և մանաւանդ՝ ցաւելւած բանւորական բառականից: Իսկ եթէ ոչ, ապա ի՞նչ հիմք ունի կառուցկին տալուած բնորոշում, որ չէ կարելի յարմարցնել ժամանակակից պրոլետարիատ» հասկացողութեանը մի սղմը-քաղաքային պրոլետարիատի իր քանակութեամբ բաւական աչքին մի խաւեր: Այստեղ չկայ ոչ մի օբիեկտիւ—արա-

մաբանական հիմք, այլ կայ միայն՝ սուբիեկտիւ-հոգեբանական. Լուպենպրոլետարիատը մարքսիստի համար թէպէտ և պրոլետարիատ է, բայց ոչ «խկական», ոչ «ժամանակակից», կամ աւելի պարզ ու անկեղծ ասելով՝ դա այնպիսի պրոլետարիատ չէ, որի վրա են հիմնում մարքսիստների գիտումներն ու ակնկալութիւնները: Եհշտենք նոյնպէս և այն, որ Կառուցկու յիշած «կարեոր գերը արդիւնագործութեան մէջ» բնորոշելով մի կողմից պրոլետարիատի ոչ բոլոր տեսակները, միւս կողմից հանդիսանում է մի այնպիսի յատկանիշ, որն ընդհանուր է պրոլետարիատի մի քանի խաւերի և անմիջական արտադրութեան գիւղ-գիւղացիների համար: Ժամանակակից կապիտալիստական կազմը՝ իր առեւրական, կը եղիտային և վաշխառուական կապիտալի, իր խոշոր հողատիրութեան և հարկային սիստեմի հետ միասին՝ նոյնպէս էական կերպով «հանգչում է» գիւղացիների աշխատանքի վրայ, որ զանազան ուղիղ և ծուռ ձաւապարհներով հարստահարում է հէնց նոյն կապիտալի կողմից:

II. «Ժամանակակից» պրոլետարիատի կարեոր գերը արդիւնաբերութեան մէջ պայմանաւորում է մի այլ յատկանիշ էլ, որը զանգանում է այդ պրոլետարիատին Լուպենպրոլետարիատ-ից: Առաջինը այն աստիճանի «չքաւոր» չէ, որքան երկրորդը: Առաջինը «չքաւոր է» միայն արտադրելու միջոցների վերաբերմամբ, իսկ այդ բոլորովին չէ ենթադրում, որ նա անպատճառ աղքատ է գոյութեան միջոցներով. այդ աղքատութիւնը կարող է լինել, կարող է և չը լինել: Իսկ երկրորդը՝ ընդհակառակը, նա տանջում է կենսական պիտոյքների պակասութիւնից, շարունակ կիսաքաղցած մնալուց, և այդ տանջանքները նրա համար կանգնած են առաջին տեղում, վարագութելով միանգամայն արտադրելու միջոցների բացակայութեան խնդիրը: «Ժամանակակից վարձու բանւորը մնում է պրոլետար, մինչև որ նա չունի իր արտադրելու պայմանները, թէկուզ և նրա դրութիւնը՝ իրեկ սպառողի՝ լինէր միանգամայն բաւարար, թէկուզ և իրեկ սպառող՝ նա ունեոր լինէր, այսինքն լինէր սեփականատէր կահ-կարասիքի, զարդարանքի, նոյն իսկ տնակի իր բանակութեան համար»: Նրա ձգտումը՝ բարելաւել իր դրութիւնը՝ «բղխում է ոչ թէ նրա-

աղքատութիւնից, այլ այն հակառակութիւնից, որ գոյութիւն ունի նրա և իր արտադրելու միջոցների սեփականատիրոջ միջև։

Այդ առթիւ մենք առ այժմ միայն մի նկատողութիւն կանենք։ Կառցին, որ այլ դէպքերում այնքան խիստ է գծագրում այն սահմանները, որոնցից գուրս մարդ այլ ևս իրաւունք չունի «ժամանակակից պրօլետարի» տիտղոսը կրելու, այդ նոյն կառցին այս դէպքում բաւական զիջող է։ Վարձու բանւորը ներկայանում է որպէս «պրօլետար» նոյն իսկ այն դէպքում, երբ նա տնատէր է, ենթադրելով միայն, որ տունը նրա համար ոչ թէ եկամուտի աղբիւր է, այլ միայն իր ապրելու համար է։ Այդ բոլորը շատ գեղեցիկ է, բայց ահա մի շարք հարցեր, որ այստեղ ծագում են. ապա եթէ բանւորը բանջարանոց էլ ունի, որի բերքերը ծառայում են բանւորի ընտանիքի գործածութեան համար,—այս դէպքում էլ արդեօք նա պրօլետար կմնայ։ Հաւանօրէն, այն. որովհետեւ՝ իրեն սպառող նա կարող է լինել «ունեոր»։ Եւ իսկապէս, ինչ մի տարբերութիւն կայ տան սեփականութեան և բանջարանոցի սեփականութեան մէջ։ Բայց եթէ նա կարող է ունենալ բանջարանոց, մնալով «ժամանակակից պրօլետար», ապա ինչո՞ւ չէ կարող նա բանջարանոցի փոխարէն ցորեն ցանած մի կտոր հող ունենալ եթէ դարձեալ այդ ցորենը գործ է ածւում սեփական կարիքների համար։ Մենք սրանով ուզում ենք ասել, որ այն դրութիւնը, թէ «պրօլետարը, իրեն սպառող, կարող է միենոյն ժամանակ լինել և ունեոր»,— կամ բաւական առածքական է, որ կարողանայ վերաբերել և զիւղացուն,—մասնաւանդ բնական տնտեսութեամբ ապրող գիւղացուն,—կամ յիշեալ դրութիւնը կազում է սկզբից և եթ ներքին հակասութեամբ, ուստի և ամբողջովին պիտի ժխտուած լինի։ Այս դիտողութիւնը մեզ գեռ հարկաւոր կը գայ ստորեւ։

III. Երրորդ կէտը, որով «ժամանակակից պրօլետարիատը» տարբերում է «վաստակեալ և ընդսաւոր» ժողովրդի ալլ խառնից, կայանում է հետեւեալում։ «Պրօլետարը հանդիսանում է աշխատող արտադրելու ոչ թէ անհատական, այլ հասարական միջոցներով, որոնք կենտրօնացած են այնպիսի չափեւ

րով, որ նրանցից օգտւելը, նրանց գործադրելը կարող է ոչ թէ առանձին, մի հատիկ բանւորը, այլ բանւորների մի ամբողջ հասարակութիւնը։ Այստեղ կարելի էր մատնացոյց անել կառցիուն այն բանի վրայ, որ ինքնուրոյն անմիջական արտադրողներն էր, որչափ որ նրանք միանում են զանազան ընկերակցութիւնների (կօօպերացիաների) և կապակցութիւնների (ասսօցիացաների) հողի վրայ, նոյնպէս դանում են «աշխատողներ արտադրութեան հասարակական կենտրօնացած միջոցներով», ուրեմն այդ չէ կազմում բացառապէս պրօլետարիատի յատկանիշը։ Կառցին նախատեսնում է այս առարկութիւնը և նախօրօք աշխատում է նրա առաջն առնելու «Երրարտադրելու միջոցների վերաբերմամբ մասնաւոր սեփականութիւնն է տիրապետում,—ասում է նա,—այդ միջոցների ընկերակցական սեփականութիւնը երբէք չէ կարող գառնալ սեփականութեան ընդհանուր ձեւ։ և հէնց որ այդ ուղղութեամբ արւած բոլոր փորձերը աջող ելը են ունենում, նրանք վաղ թէ ուշ ընդունում են բուրժուական-կապիտալիստական ուղղութիւն։ Դա արձագանք է ընկերակցական շարժման վերաբերմամբ գոյութիւն ունեցող այն հին հայեացքի, որը համարում է այդ շարժումը մի կիսամիջոց, որոշ տեսակէտից նոյն իսկ վասակար։ ընկերակցութիւնները բարելաւում են բանւորների փոքր խմբերի զրութիւնը, բարձրացնում են նրանց իրենց գասակարգի զրութիւնից, փոխանակ միանգամից բարձրացնելու ընդհանուր գասակարգային մակերեսոյթը։ որքան աւելի աջող է այդպիսի փորձը, որքան աւելի է բարձրանում տւեալ խումբը իր գասակարգի ընդհանուր կենսական մակերեսոյթից, այնքան աւելի փտանգ կայ, որ նա կարող է այլառեւել և դառնալ մի արտօնեալ խմբակ, իր տեսակի մի բանւորական արիստօկրատիա։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդպիսի ապացոյց կարելի է բերել և ամեն մի մասնակի գործադրութիւն, ամեն տեսակ սինդիկատների և կօլիցիաների դէմ¹⁾։ Կառցիուն համարձակ յայտարարութիւնը, թէ բոլոր

¹⁾ Միայն անորոշ «ընդհանուր գործադրութիւն» է, որ ազատ տեսակ յանդիմանութիւնից. բայց հէնց գրան է, որ մարքսիստները վերաբերում են ամենամեծ կասկածանքներով։

ընկերակցութիւնները մի ինչ որ ներքին անխուսափելիութեամբ բուրժուական այլասեռման են հնթարկւելու, հասկանալի կլինէր, եթէ այդ եզրակացութիւնը արւած լինէր ընկերակցական շարժման իրական պատմութեան բազմահատոր և ստատիստիքական հետազոտութիւնից յետոյ,—մի պատմութեան, որը գեռ աւարտւած չէ և որի վերջին քայլը կայանում է առ այժ նրանում, որ մի զգալի մօտիկութիւն է նկատւում ընկերակցութեան և կօլեկտիվիզմի միջն (բելգիական շարժումը, շատ փորձեր ֆրանսիայում, ինչպէս, օրինակ, ապակույայնի գործարանը Ալբիում, կամ Շվեյցարիայում, ինչպէս Բիրսէկի ընկերութիւնը և այլն): Իսկ այս դէպքում ապացուցել այնքան համարձակ դօգմատիք և հնթարրական մարդարէութիւններով՝ կը նշանակէ ապացուցել մի կասկածելի դրութիւն մի այլ աւելի կասկածելի դրութիւնով. իսկ այդ մի միջոց է, որ հազիւ թէ գիտական լինի:

Միւս կողմից, ոչ միայն կան անկախ, ինքնուրոյն արտադրողներ, որոնք աշխատում են արտադրելու հասարակական-կենտրոնացած միջոցներով. կան և պրոլետարներ, որոնք աշխատում են արտադրելու անհատական, մանր միջոցներով, ինչպէս, օրինակ, գեղարվեստական, արդիւնագործութեան բոլոր պրոլետարները ֆրանսիայում, որոնք աշխատում են փոքրիկ արհեստանոցներում: Դրանք բոլորը՝ ըստ կառուցկու՝ «Ժամանակակից» չեն, «իսկական» պրոլետարներ չեն! «Հասարակական-կենտրոնացած» միջոցներով չէ աշխատում նոյնպէս և մտաւոր աշխատանքի պրոլետարների անգին մեծամասնութիւնը:

IV. «Վերջապէս,—ասում է կառուցկին,—կայ մի չորրորդ յատկանիշ էլ, որ բնորոշում է ժամանակակից պրոլետարիատին... այդ այն է, որ նա այժմ բաժանւած է իր տիրոջ տնային կենցաղից: Առաջայ վարձու բանորմները, ընդհանուր կանոնով, ներկայացնում էին իրենցից գործատուի տնային կենցաղի մի հասարակ յաւելումը. նրանք կազմում էին նրանտանիքի, նրա տան պատկանելութիւնը, ոչ միայն իրենց բանորմներ, այլ և իրեն մարդիկ. նրանք բոլորը՝ աշխատանքից դուրս էլ իրենց ամին մի գործողութեան վերաբերմամբ:

Հպատակւած էին իրենց տիրոջը: Ժամանակակից վարձու բանորոր գործից դուրս պատկանում է միայն իրեն: Նա այնքան աւելի է ազատ մարդ դառնում և գործից դուրս հակադրում էրեն իր կապիտալիստին, որպէս հաւասարը հաւասարին, որքան աւելի է զարգանում արտադրութեան կապիտալիստական ձևը և վերանում ֆէօդալիզմն մնացորդները»:

Նախ և առաջ ակներև է, որ այդպիսով «Ժամանակակից» պրոլետարիատի կազմից դուրս է ձգւում աշխատաւորների էլլ մի նոր խաւ, այն է ժառաները:

Երկրորդ, նոյն կերպ դուրս է ձգւում նրա շարքերից և գիւղանական պրոլետարիատը: Յի՞թաւի, ահա թէ ինչպէս է բնորոշում գիւղական մշակներին (բատրակ) նոյն կառուցկին. «Վարձու բանուրի դրութիւնը հողագործութեան մէջ... ընդունում է բոլորովին այլ բնաւորութիւն, բան քաղաքային աբդիւնագործութեան մէջ: Գիւղում վարձու բանուրը, որը բոլորովին գուրկի է սեփականութիւնից և միենոյն ժամանակ ունի իր ազատ ընտանեկան անկիւնը, —այդպիսի բանուրը միանգամայն բացառիկ երեսոյթ է»: «Ազատ» չունեոր, օրավարձով բանող մշակները «ամենից աւելի նմանում են քաղաքային պրոլետարներին, բայց միենոյն ժամանակի էապէս տարբերում են վերջնական նրանով, որ կազմում են ուրիշի տնային կենցաղի յաւելումը, բայց պարիշ մասը»: Մի խօսքով, չորրորդ բնորոշ առանձնայատկութիւնը, որին իրաւունք է տալիս կոչելու «Ժամանակակից պրոլետարիատ», այդ յատկանիշը հողագործական վարձու բանուրների մօտ բացակայում է:

Ուրեմն, կառուցկին գտել է չորս յատկանիշ, որոնք դարձնում են չքաւոր, աշխատաւոր, շահագործուղ մարդկանց մի որոշ հասարակական դասակարգ, որոշ պատմական ոյժ, միանգամայն որոշ շահերով և նոյնքան որոշ սօցիալական վարքով:

Ինչպէս ասւած էր վերեւում, ըստ կառուցկու մարդկանց միացնում է գասակարգերի մէջ ոչ թէ բարօրութեան այս կամ այն աստիճանը, այլ նրանց դրութիւնը արտադրելու մէջ,—մի դրութիւն, որն ստեղծում է մարդկանց համար իրենց բերովը երկրի տնախական միանիզմում: Ներկայ կապիտալիստական կազմը, ըստմանից գենարի է կոչել մարդկանց



մի առանձին խաւ, որոնք կազմում են կապիտալիստական արտադրութեան աշխատահիմքը, աշխատում են արտադրելու հասարակական-կենտրոնացած և ոչ իրենց պատկանող միջոցներով, աշխատանքից գուրս անկախ են իրենց վարձողներից: Այդ հասարակական խաւն է հէնց, որ ներկայանում է որպէս ժամանակակից պրօլետարիատ, մի առանձին հասարակական դասակարգ, գործնական մարքսիզմի առաջին ու վերջին խօսքը:

Դժւար չէ տեսնել, որ այդպիսով կառւցկու համար միայն արդինաբերական, գործարանական վարձու բանւորն է հանդիսանում «իսկական» պրօլետարիատ¹⁾:

Այժմ հասկանալի է, թէ ինչպէս պիտի վերաբերեի կառւցկին գիւղացիութեանը: Մենք տեսանք, որ Ֆոլմարն ու Լիբենեխտը գիւղացիութիւնը ըստ իր շահերի հաւասարեցնում են պրօլետարիատին: Կառւցկու տեսակէտից այդ, ի հարկէ, պիտի կոպիտ սխալ թւի: «Գիւղացիների մօտ ոչ մի կերպ չէ կարելի գտնել այդ բոլոր չորս յատկանիշը, որոնք բնորոշում են պրօլետարիատին»—և դա կառւցկու աչքում անդառնալիօրէն լուծում է հարցը: Գիւղացիութիւնը միանգամայն առանձին հասարակական դասակարգ է, առանձին շահերով, և միացնել նրան, իբրև «աշխատաւոր» կամ «բանւոր» ժողովուրդ՝ մի կարգի մէջ արդինագործական պրօլետարիատի հետ, սխալ է:

Չէ կարելի չընդունել, որ այդ եզրակացութիւնը կառւցկին արել է միանգամայն տրամարանօրէն: Նրա առաջադրութիւններից այլ հետևողութիւններ անել չէր էլ կարելի: Բաւական էր գտնել ըստ կարելոյն նեղ բնորոշում «պրօլետա-

¹⁾ Այլ կերպ էր նայում գործին, օրինակ, հանգուցեալ կերկնէստը, հին դպրոցի մարքսիստներից ամենառողդափառը: «Մեզ,—ասում է նա իր «Grund-und Bodenfrage» գրքոյի մէջ,—յաճախ աշխատել են ցոյց տալ, որպէս պաշտպաններ բացառապէս ըստուրների, ընդունելով «բանւոր» խօսքը արդինաբերական վարձու բանւորների նեղ ու սահմանափակ մտքով: Բայց միթէ հողագործութիւնն էլ այնպիսի մի արդինաբերութիւն չէ, ինչպէս միւսները: Եւ ոչ թէ միայն քաղաքի և գիւղի վարձու բանւորն է բանւոր, այլ ամեն մէկը, ով ապրում է ոչ ուրիշի աշխատանքի շահագործումով, հետեւպէս՝ նոյնպէս և գիւղացին և մանր արհեստաւորը»...

րիատ» հասկացողութեան, որպէս զի նրա և գիւղացիութեան մէջ մի անգուսդ փորւէր: Եւ կառւցկին իսկապէս արել է դրա համար այն ամենը, ինչ հնարաւոր էր: «Պրօլետարիատի» նրա բնորոշումը այնքան նեղ է, որ նրա միջով, ինչպէս ասեղի ծակով, չեն անցնում ոչ ժամանակակից Սուպերպրոլետարիատը, ոչ գիւղատնտեսական մշակը, ոչ արհեստաւորքարգահը, ոչ գեղարւեստական արդիւանագործութեան աշխատաւորը, ոչ բանւորը «անային արդինագործութեան» սիստեմի մէջ:

Բայց գուրս վանելով պրօլետարիատի շարքերից ամենախակական բանւոր մարդկանց այդպիսի մի բազմութիւն, գոնէ հասամ կառւցկին իր հիմնական նպատակին: Ստացաւ նա արդեօք վերջ ի վերջոյ մի կատարելապէս միասլաղաղ մասսա, բոլորովին միատեսակ շահերով և սօցիալական հոգեբանութեամբ: Ահա թէ ինչում է հարցը: Եւ այդ հարցին ես պատասխանում եմ. ոչ! Դասակարգը բնորոշելու համար՝ կառւցկին, որպէս օրիեկտիվիստ, որոնում էր անպատճառ արտաքին, օրիեկտիւ, ձևական յատկանիշներ: Բայց արտաքին, ձևական նմանութիւնը չափազանց յաճախ մակերեսային է լինում: Վերցնէնք թէկուզ մի գործարանի կառավարչի կամ մի ակցիօնէրական ընկերութեան վերատեսչի: Ըստ կառւցկու՝ պիտի դուրս գայ, որ դրանք «իսկական ժամանակակից պրօլետարներ են»... Յիրաւի, 1) արտադրութեան միջոցներ նրանք չունեն, 2) արտադրութեան մէջ խաղում են չափազանց կարենողեր, 3) աշխատում են (կառավարելու աշխատանքը) արտադրութեան հասարակական-կենտրոնացած միջոցներով, 4) արտադրելուց դուրս՝ պատ են ու հաւասար վարձողին և մի հասարակ յաւելում չեն նրա տնային կենցաղին... Բայց չէ որ դրանք, կասէք դուք, կատարեալ բուրժույներ են! նրանք ստանում են հազարներով ոսճիկ, լողանում են շամպայն գիշենու մէջ... Հոգ չէ. «պրօլետարները պիտի լինեն չունենոր միայն արտադրելու միջոցների վերաբերմամբ, այլ ոչ գործածելու պիտոյքների»...

Ահա ձևական բնորոշումով յափշտակելու հետեւանքը:

Այդ բնորոշումը միաժամանակ և չափազանց լայն է, և չափազանց նեղ¹⁾:

Հակառակ տեսակի մի գործողութիւն է կատարում կառցի ին գիւղացիութեան վերաբերմամբ: Այստեղ նա ոչ միայն չէ որոշում նախօրօք, թէ ինչ է հասկանում ինքը «գիւղացիութիւն» ասելով, այլ և, ընդհակառակը, դիտմամբ թողնում է այդ խօսքը իր լայն ու անորոշ նշանակութեամբ, որպէսզի կարելի լինի յետոյ խցկել նրա մէջ ամենատարբեր սօցիօրացիական մեծութիւններ: Այդ մեթօդով մարդ կարող է իր ցանկացած երկու միմիւնաց շատ մօտ հասկացողութիւններ դարձնել մէկը միւսին հակառակ. զրա համար հարկաւոր է միայն վերցնել մէկը բառի ամենալայն մտքով, իսկ միւսը ամենանեղ:

Բայց խօսքը տանք իրեն՝ կառցկուն: «Գիւղացու մօտ ոչ մի կերպ չէ կարելի գտնել ալդ բոլոր բնորոշ առանձնաշատկութիւնները: Մատնացոյց են անում գրաւ վերցնող պարտատիրոջ օրինակի վրայ, որը, իբր թէ, փաստօրէն տէր է գիւղացու կալւածի: Բայց, իսկապէս, պարտատէրը այն յարաբերութեան մէջ չէ գէպի գիւղացին, ինչ յարաբերութեան մէջ է կապիտալիստը գէպի վարձու բանորը, այլ այնպէս, ինչ պէս հողատէրը ձեռնարկողի վերաբերմամբ:

Այն բանից, որ գիւղացին իր հողը պարտը տեղ գրաւ է դրեւ, նա նոյնըն ըիչ է պրօլետար դառնում, որքան ըիչ պրօլետար կը դառնայ մի գործարանատէր այն բանից, որ իր գործերը վարում է ոչ թէ իր սեփական տանո, այլ մի-

¹⁾ Որքան աւելի պարզ է ու խոր այն բնորոշումը, որ տւել է ինքը Մարքսը «Կապիտալի» մէջ: «Ծնահեսական մըտքով,—ասում է նա, —պրօլետարներ անւանում են այն վարձու բանուրները, որոնք արտադրում են «կապիտալ» և աւելացնում են նրա արժեքը և որոնց այդ կապիտալը դուրս է նետում փողոց, երբ նրանք դառնում են աւելորդ «տէր-կապիտալը» կլորացնելու համար (հատոր I, եր. 536): Այստեղ միայն երկու յատկանիշ կայ, մէկը ձեւական է (վարձու), միւսը՝ էական («տէր-կապիտալը» կլորացնելը) և միենոյն ժամանակ այդ միանգամայն ապացուցում է ֆոլմարի ճշմարիտ լինելը, որի համար գիւղացին ու բանորը միատեսակ անտեսական է ու թիւններ են, արտայայտելու ձեւելի տարրերութեամբ:

վարձած շինութեան մէջ... Գիւղացին միշտ մնում է արտադրութեան միջոցների տէր, այն է՝ իր մեքենաների, գործիքների, տաւարի, մի խօսքով—իր անտեսութեանը պատկանող ամբողջ գոյքի (ինվենտար): Ի հարկէ, այդ բոլորի վրայ նոյն պէս կարող է պարտք ծանրացած վիճակից գիւղացին այսուամենայնիւ կատարում է ձեռնարկողի գումարիցիան, դերը, և իրեւ այդպիսին՝ կազմում է պրօլետարիատի հակապատկերը (նոտրագիրը մերն է) ինչպէս եւ գործարանատէրը, որը, միայն արտադրութիւն է կատարում փոխ առած կապիտալով, որը նոյնպէս արտադրութեան միջոցների սեփականատէրը չէ, բայց այնուամենայնիւ գործում է որպէս արդիւնաբերական կապիտալիստ և իրեւ այդպիսին՝ կանգնած է թշնամնաբար պրօլետարիատի յանզիմանն»¹⁾:

Այդպէս է պատճառաբանում և ապացուցում նարպիկ դիակելտիկ կառցկին: Եւ անկասկած, նրա ապացոյցն ունի արտաքին, երեական ձշութիւնն: Դեռ աւելին կասեմ. զուտ ձեւական տեսակէտից նա միանգամայն արդարացի է:

Բայց յայտնի են այդ տեսակ արդարացիութեան յատկութիւնները, որը զուտ արտաքին է: Հէնց գրա համար է ասւած, թէ սուստ յս—սուստ ինյուրիա, այսինքն՝ ամենաբարձր արդարացիութիւնն է: Եւ մենք մեղ նպատակ կը դնենք ապացուցելու, որ կառցկու ձեւական արդարացիութիւնը մի ամենամեծ անարդարացիութիւնն է քաղաքատնտեսութեան ամենաանվիճելի ճշմարտութիւնների մի ամբողջ շարքի վերաբերմամբ: Իր գրւածքի հէնց վերոյիշեալ տեղովը կառցկին, ժամանակակից գիւղանական ուղղափառ մարքսիստներից այդ ամենաուղղափառն ու ամենաախելօքը, միանգամայն պրօլետիւն է պարագատնտեսութեան ամենաանվիճելի ճշմարտութիւնների մի ամբողջ շարքի վերաբերմամբ: Իր գրւածքի հէնց վերոյիշեալ տեղովը կառցկին, ժամանակակից գիւղանական ուղղափառ մարքսիստներից այդ ամենաախելօքը, որ ինքը կամ բոլորովին չի կարողացնում, կամ չի ցանկանում հասկանալ իր մեծ ուսուցիչ կարլ Մարքսի այն գրութիւնները, որոնք վերաբերում են մեղ այստեղ հետաքրքրող խնդրին: Ասում եմ այդ համար-

¹⁾ «Die Agrarfrage», եր. 307—308: Բացի յիշատակած տեղից՝ նոտրագիրը ամեն անդ մերն է:

ձակօրէն, որովհետեւ ստքիս տակ կայուն հող եմ զգում. այն տեղերը, որ ևս կը բերեմ Մարքսից, միանգամայն պարզ ու որոշ են և այլ ևս տեղ չեն թորնում զանազան մեկնութիւնների:

Բացենք «կապիտալի» III հատորը, որտեղ ամփոփւած է Մարքսի ամբողջ ուսմունքը կրեդիտի մասին: Տեսնենք, կարելի՞ է արդեօք Մարքսի թէօրիայի տեսակէտից անել այնպէս, ինչպէս Կառուցին է անում, այսինքն պնդել, թէ գիւղացու յարաբերութիւնը դէպի իր հողը գրաւ վերցրած պարտաւերվաշխառն նոյնն է, ինչ որ գործարանատիրոջ յարաբերութիւնը դէպի այն բանկիրը, որը նրա համար կրէդիտ է բացել, փող է պարտք տալիս:

Ի՞նչ տարբերութիւն կայ կրէդիտի և վաշխառութեան մէջ. առա մի հարց, որը ի միջի այլոց գնում է Մարքսը III հատորի 36-դ գլուում: Այդ հարցի վերաբերմամբ գոյութիւն ունեցող պատասխանները նա համարում է անբաւարար: Նա չէ ընդունում, որ այդ տարբերութիւնը միայն քանակական է և կայանում է լոկ ստացւող տոկոսի չափի մէջ: Յիրաւի, եթէ ես փոխառած կապիտալից ստանում եմ 100% օգուտ և տաշլիս եմ պարտատիրոջը այդ օգտի մի երրորդ մասը կամ նոյն իսկ կէսը, հազիւ թէ կարելի լինի նրան իմ վերաբերմամբ վաշխառու անւանել, մինչդեռ այլ պայմաններում փոխ տւած կապիտալին նոյն 30,50%, վերցնելը ամենաանխիղճ վաշխառութիւն կըլինէր: Ընդհանուր տոկոսի բարձրութիւնը, ինչպէս և վաշխառուական տոկոսի բարձրութիւնը, փոփոխում է առանձին տընտեսական պայմանների ազդեցութեան տակ և հէնց այդ պատճառով չունի անմիջական, վճռող նշանակութիւն: Կապիտալը այդ երկու ձևով գործածելու տարբերութիւնը զուտ սկզբունքային է և գոտնում է այդ երկու ձեերի էութեան մէջ: «Newmann-ը, ասում է Մարքս,—արտայայտում է այդ տարբերութիւնը մի անհեթեթ ֆորմուլի մէջ, ասելով, թէ բանկիրը վայելում է յարգանք, մինչդեռ վաշխառուի վրայ նայում են ատելութեամբ ու արհամարհանքով այն պատճառով, որ մէկը պարտը է տալիս հարուստներին, իսկ միւսը՝ պղքատներին... Նա չէ նկատում, որ մէկի և միւսի մէջ արտադրութեան երկու հասարակաւ-

կան ձեւերի եւ լրանց համապատասխանող հասարակական կարգ ու սարքի տարբերութիւնն կայ»¹⁾: Ինչպէս տեսանք, աւելի քիչ նկատում է այդ բանը կառուցիլին:

Ինչումն է ապա բանը: Հէնց կրեդիտի կոչման մէջ, այն նշանակութեան մէջ, որ ունի փոխարինութիւնը պարտք վերցնողի համար: Եթի կապիտալիստ փող է պարտք անում, նա գործ է ածում այդ իրքեւ կապիտալ, իրքեւ ինքն իրեն ածող արժէք: Պարտք վերցրած փողը, որ նա գրել է արդիւնաբերութեան մէջ, հնարաւորութիւնն է տալիս նրան գնելու շուկայում մի առանձին տեսակի պարանը՝ բանւորական ոյժը՝ որը յաւելեալ արժէք բերելու յատկութիւնն ունի: Կրեդիտը, այդպիտով, հարատացնում է պարտք վերցնողին: Այն, ինչ որ նա իրքեւ կապիտալի տոկոս վճարում է պարտատիրոջը, մի մասն է միայն յաւելեալ արժէքի, որը նա ստացել է շնորհիւ փոխ առած կապիտալի ինքնակերպ «արտադրող ոյժի»: Այդպիսով, փոխառութիւնը հանդիսանում է այստեղ իրքեւ մի գործողութիւն, որից շահուում են երկու կողմերն էլ՝ պարտք տուղն էլ, պարտք վերցնողն էլ, և այդ ի հաշիւ երրորդ կողմի: Զարմանալի չէ, որ ժամանակակից տնտեսական կազմի իդէօլօգ-ներկայացուցիչները անդադար ներբողներ են նւիրում կապիտալին և «փոխանակ անէծք կարգալու կապիտալին, որ ընդհանրապէս տուկոս է բերում», «նրանք, ընդհանակառակը, դրականօրէն ընդունել են այդ և իրենց այդպիսի հայեացքը ելակէտ դարձրելը: Իսկ վաշխառութիւնը մինչև այժմ ընդհանուր կշտամբանք է առաջացնում»:

Եւ, սակայն, տոկոս բերող կապիտալը, որ չափով որ նա արտադրութեան կապիտալիստական ձեի էական տարրն է կազմում, ոչ մի կերպ չէ տարբերում՝ ոչ իր էութեամբ, ոչ էլ ընտառութեամբ՝ վաշխառուական կապիտալից²⁾: Տարբեր են միայն փոխուած պայմանները, որոնցում այդ պատճառով

¹⁾ «Կապիտալ», հատոր, III, եր. 490.

²⁾ Հէնց այս է այն ձևական նոյն ութիւնը, որ գայթակը ղեցրել է կառուցիուն:

էլ կերպարանափոխուում է նոյնպէս և պարտք վերցնողը, որը հակադրուում է պարտք տւողին¹⁾:

Եթի փողը պարտք է անուում անմիջական արտադրողը, որն ապրում է իր սեփական աշխատանքով, այդ գէպքում նրա և պարտք տւողի յարաբերութեան բնաւորութիւնն էապէս փոխուում է, անկախ տոկոսի մեծութիւնից: Այդ արդէն առետական մի գործողութիւն չէ, որտեղ շահւում են երկու կողմերն էլ վերցրած փողը չէ տալիս այլ ևս փոխ առնողին ձրի ֆօնդ տոկոսներ վճարելու համար: Փողն ինքն իրեն, ըստ իր նիւթական բնութեան, ընդունակ չէ նոր փող ծնելու: Այն, որ պարտապանը տոկոս է վճարում, նշանակում է միայն, որ «բիւրեղացած աշխատանքի» մի որոշ մասը փողի ձևով տեղափոխւել է պարտապանի գրպանից պարտատիրոջ գրպանը, և տեղափոխւել է առանց համապատասխան փոխարինութեան, առանց էքվիվալէնտի,—այսինքն, ըստ էութեան, հէնց այնպէս, ինչպէս որ առանց էքվիվալէնտի արդիւնագործ կապիտալիստի գրպանն է տեղափոխուում յաւելեալ արժէքը, վարձու բանւորի չըվճարւած աշխատանքը: Եւ այդ տեղի է ունենուում, ինչ տոկոս էլ որ մինի, թէկուզ ամենափոքր: Տոկոսը բարձրանալու համեմատ փոխուում է պրօցէսսի ոչ թէ էութիւնը, այլ միայն ծաւալը, լարւածութիւնը (ինտեսիվութիւն). և այդ պրօցէսսը իր էութեամբ միանգամայն նման է զուտ-կապիտալիստական շահագործման պրօցէսսին: «Իրքեւ տոկոս, վաշխառուն կարող է կլանել այն ամենը, ինչ աւելանուում է արտադրողի գոյութեան ամենաանհրաժեշտ միջոցները դուրս գալուց... վաշխառուն, չը բաւականանալով գեռ նրանով, որ մղում է իր զոհի յաւելեալ աշխատանքը, քիչքիչ ձեռք է բերում սեփականութեան իրաւունք գիւղացու աշխատանքի պայմանների վրայ էլ նրա հողի, տան վրայ և այլն) և շարունակ աշխատում է միանգամայն զրկել նրան սեփականութիւնից²⁾:

Եւ ահա վաշխառութեան հէնց այս թշւառ, քարուքանդ

1) «Կապիտալ», հատ. III, եր. 494.
2) «Կապիտալ», հատ. III, եր. 490.

արւող, հարստահարւող զոհի մասին է խօսում կառուցկին, որտ վրայ է նայում իր գոկարինեօր ձեականութեան ակնցով և սառնասարորէն յայտնում: «Եա (գիւղացին) նոյնքան քիչ է պլրուետար դառնում, որքան քիչ պլրուետար է դառնում և այն գործարանատէրը, որը վարում է իր գործերը փոխ առած կապիտալով»... Եթէ կառուցկու այդ հայեացքը մենք չը բացատրենք գոկարինեօրութեամբ, որն ընդունակ է կուրացնելու ամենալաւ մարդկանց, այն ժամանակ պլիտի համոզւենք, որ այդպիսի հայեացքն ապացոյց է բարոյական ապշեցուցիչ անսրտութեան: Վաշխառուական կապիտալի ցանցերում ոչնչացող այդ զոհին գործարանատիրոջ (!) հետ համեմատել կարելի է ընդունել միայն, իբրև մի յափշտակութիւն կեանքից կարւած կարինետային մտածողի կողմից, կամ իբրև ծազր մարդկային տանջանքների վրայ...»

Գուցէ մեղ առարկեն, թէ կառուցկին ի նկատի է ունեցել ոչ թէ վաշխառութիւնը, այլ ուղղակի գրաւով պարտք վերցնելը: Դըրան մենք կը պատասխանենք Մարքսի խօսքերով: «Առանձին անհատների և ամբողջ դասակարգերի վերաբերմամբ՝ տոկոս բերող կապիտալը պահպանում է վաշխառուական կապիտալի ծերը երկու գէպքում: կամ այնպիսի հանգամանքներում, երբ փոխառութիւնը կատարում է և կարող է կատարել ոչ կապիտալիստական ձևով արտադրելու մտքով, երբ մարդ պարտք է վերցնում իր անձնական կարիքների համար... կամ երբ արտադրողը կապիտալիստական արտադրողը չէ, այլ մանր գիւղացի, արհեստաւոր և այն, այսինքն մինչեւ որ անմիջական արտադրողը դեռ տէր է իր արտադրութեան պայմանների»³⁾:

Այդ է զուտ սկզբունքային տարբերութիւնը կապիտալիստական և ոչ-կապիտալիստական կրէդիտի, այսինքն՝ վաշխառութեան միջն (ընդունելով «վաշխառութիւնը» բառի այն խոր, զիտական մտքով, որ գործ է ածում: Մարքսը): Կապիտալիստական կրէդիտը ծառայում է որպէս հզօր գործիք արդիւնաբերութեան ծաղկման համար: Եա կենտրոնացնում է կապիտալները, թոյլ չէ տալիս, որ նրանք մնան պարապ ընկած, աեղափոխում է այդ կապիտալները անշնորհք ու ծոյլ

3) «Կապիտալ», հատ. III, եր. 494.

ձեռքերից աւելի գործունեայ և եռանդում ձեռքեր. Նա բարձրացնում է երկու, երեք և աւելի անգամ հասարակութեան արտադրողական ոյժերը, աւելացնում է աշխատանքի պահանջը՝ բանտորի համար այդ բանից ծագող բոլոր բարեյաջող հետևանքներով։ Իսկ ինչ վերաբերում է ոչ-կապիտալիստական, վաշխառուական կրեդիտին¹⁾ և կրեդիտային կապիտալին, — նա «կապիտալի շահագործելու եղանակն ունենալով հանգերձ, չունի արտադրելու եղանակը»²⁾։ «Վաշխառուական կապիտալը այն ձեռք, երբ նա փաստորէն սեփականացնում է անմիջական արտադրողի ամբողջ յաւելեալ աշխատանքը, չը փոխելով միենոյն ժամանակ արտադրելու եղանակը... հասցնում է արտադրելու այդ եղանակը թշւառ գրութեան, թուլացնում է փոխանակ զարգացնելու՝ արտադրողական ոյժերը և այդպիսով հաստատում, յաւերժացնում է մի այնպիսի ցաւալի գրութիւն, որի մէջ աշխատանքի արտադրողական ոյժերը չեն զարգանում ի հաշիւ նոյն իրեն բանտորի, ինչպէս այդ տեղի է ունենում կապիտալիստական եղանակով՝ արտադրելու միջոցին»³⁾։ Նա «չէ փոխում արտադրելու եղանակը, բայց՝ ինչպէս մակարոյծ՝ կպչում է նրանից և թշւառ գրութեան մէջ գցում... ծծում է նրա հիւթերը, զրկում նրան կենսունակութիւնից և ստիպում է, որ արտադրութիւնը կատարի աւելի ու աւելի վատթարացող պայմաններում»⁴⁾։ Մի խօսքով, ինչպէս պայմանակցութեան էութեամբ և սրա տնտեսական իմաստով պայմանաւորւղները համար, այնպէս էլ իր պատմական նշանակութեամբ կապիտալիստական կրեդիտը և ոչ կապիտալիստական կրեդի-

¹⁾ Իսկ կապիտալիստական կրեդիտը այն գէպքում միայն չի լինի վաշխառուական, եթէ կազմակերպւած կը լինի նպատակայալմար կերպով հասարակութեան կողմից կամ որպէս անտոկոս, կամ միայն այնպիսի տոկոսով, որը ծածկում է լոկ կրեդիտ ձեռք բերելու կազմակերպութեան անհրաժեշտ ծախչը, այսինքն՝ առանց որևէ օգտի։

²⁾ «Կապիտալ», հատ. III, եր. 492.

³⁾ «Կապիտալ», հատ. III, եր. 490—491.

⁴⁾ Նոյն տեղում, եր. 491.

աը համարեա թէ ուղղակի հակադրութիւններ են¹⁾։ Այդ է Մարքսի թէօրիան. Եւ կառցկին, որ իր համար պատիւ է համարում «ուղղափառ», «օրթօդոքս» լինելը, չը գիտէ կամ չէ ուզում ոչինչ գիտենալ այդ հակադրութեան մասին!։

Մարքսը ընորոշում է գիւղացու յարաբերութիւնը դէպի իր պարտատէրն այնպէս, որ վերջինը «փաստօրէն սեփականացնում է անմիջական արտադրողի յաւելեալ աշխատանքը (երբեմն նոյն իսկ ամբողջովին)»։ Իսկ կառցկին դեռ կարողանում է պնդել, թէ այդ յարաբերութիւնն ամենավատ դէպքում այն չէ, «ինչ որ կապիտալիստի յարաբերութիւնը դէպի վարձու բանորը, այլ այն, ինչ որ կպլածատիրոջն է դէպի ձեռնարկողը»։ Մարքսի համար գիւղացին հարատահարուղ աշխատառը է, պարտատիրոջ զոհը, իսկ կառցկու համար նա «կատարում է ձեռնարկողի դերը և իրու այդպիսին՝ հանդիսանում է պրոլետարիատի հակադրութիւնը, այնպէս, ինչպէս և գործարանատէրը»... Աւելի աղաղակող հակասութիւն դժւար կը լինէր հասանել նոյն իսկ դիտմամբ։

Այն բոլորը, ինչ ասւած է կապիտալիստական և ոչ-կապիտալիստական կրեդիտի մասին, վերաբերում է նոյնպէս և կապիտալիստական և ոչ-կապիտալիստական կապալին։ Այն, ինչ որ տալիս է կապալառու-կապիտալիստը հողատիրոջը, մի առանձին անտեսական կատեգորիա—բենտա է; որի աղբիւրը՝ ինչպէս և փոխ առած կապիտալի²⁾ տոկոսի աղբիւրը—վերջ ի վերջոյ յաւելեալ արժէքն է։

¹⁾ Հենց գրանով է բացատրում, թէ ինչու էր տոկոսը հին ժամանակներում ընդհանուրի կողմից այնպէս պախարակւում։ Մեր նախնիքները չը գիտէին կապիտալիստական կրեդիտ, և նրանց համար կրեդիտն ու վաշխառութիւնը նոյնանման հասկացողութիւններ էին։ Մի ժամանակ տոկոսն արգելւած էր եկեղեցու կողմից։

²⁾ Հողը նոյնպէս կապիտալ է, այնպէս որ բենտան որոշ չափով նման է տոկոսին։ Կապալը կարելի է դիտել, որպէս կապիտալ-հողի փոխառութիւնը։ Բայց որովհետեւ հողը մի առանձին տեսակի կապիտալ է (նախ և առաջ այնպիսի, որ չէ կարելի կամայականորէն աւելացնել), ուստի և բենտայի շար-

Բենտան, —ասում է Մարքսի իր «փիլիսոփայութեան աղբատութիւնը» գրածքում, —«նոում է հողագործի առաջ... արդիւնագործական կապիտալիստին, որը հողից եկամուտ է հանում վարձու բանւորների աշխատանքի միջոցով և տալիս է հողատիրոջը՝ իբրև կապալավարձ՝ միայն աւելորդը, որը մնում է արտադրելու ծախքերը դուրս գալուց յետոյ, հաշվելով այդ ծախքերի մէջ նաեւ կապիտալի շահը»: Այլ բան է նկատում մասր գիւղացու ոչ-կապիտալիստական կապալի վերաբերմամբ: «Այն, ինչ որ նա վճարում է իբրև կապալավարձ, յաճախ կլանում է ոչ միայն նրա օգուտի մի մասը, —այսինքն՝ նրա սեփական յաւելեալ աշխատանքի մասը, որի վեց նա իրաւունք ունի, որպէս տէր աշխատանքի սեփական գործիքների, —այլ և մի մասը այն նօրմալ բանւորական վարձի, որը նա կը ստանար այլ պայմաններում նոյն չափ աշխատանքի համար»¹⁾: Իսկ «փիլիսոփայութեան աղբատութիւն» գրքի մէջ Մարքսը, խօսում դեռ աւելի պարզ, ասելով, որ այդ դէպքում «հողատիրոջ արդիւնքը վերցում է աշխատավարձից»:

Կառուցկու համար այդ գիւղացին, ինարիէ, այնուամենայնիւ հաւասար է այն գործարանատիրոջը, որը վարում է իր գործը վարձած շինութեան մէջ փոխանակ իր սեփական տան մէջ վարելու:

Այդ բոլոր տարբերութիւնները վերջ ի վերջոյ գալիս յանդում են միայն մէկին: Մինչեւ կառուցկին օգտում է «Unternehmer» (ձեռնարկող) ընդհանուր և անորոշ տերմինից՝ գիւղացու համար մի շարք աննպաստ համեմատութիւններ առելու համար, —Մարքսը իրեն միշտ յատուկ խորութեամբ նկատում է, որ «արտադրութեան մանր միջոցները, որոնք ծառայում են նոյն իրեն արտադրողի համար որպէս արտադրելու միջոցներ և որոնք՝ ըստ իրենց արժէքի՝ չեն աճում ուրիշ աշխատանքը դրանց միացնելու շնորհիւ, —բնաւ չեն

ժումը դեկավարում են այնպիսի օրէնքներ, որոնք տարբերում են տոկոսի շարժումը դեկավարող օրէնքներից:

¹⁾) «Կապիտալ», հատ. III, էր. 516.

ներկայացնում կապիտալ»¹⁾: Այդ պատճառով, —ասում է Մարքս մի այլ տեղում, —մանր գիւղացիների ձեռքում հողը «ein reines Produktionsinstrument» (զուտ արտադրութեան գործիք է) և «գիւղացիների հարստանարումը միայն իր ձեռովն է տարբերում բանւորների հարստանարումից: Հարստանարողը երկուսի վերաբերմամբ միենոյնն է, այն է՝ կապիտալը»:

Մրանից պարզ է, թէ ներկայ կէտում, այսինքն գիւղացիութեան սօցիօլոգիական տեղի վերաբերմամբ ծագած վէճի մէջ, ով է աւելի «մարքսիստ» (բառի իսկական, այլ ոչ հեղնական մտքով), հերետիկոս ֆօլմարը, թէ ամենասուղղափառներից ուղղափառ կառուցկին...»

Վերջացնելով այդպէս անսազող կերպով իր հաշվեները առաջին կէտի հետ, որը բնորոշ է պրօլետարիատի համար և որը հակադնում է սրան գիւղացիութիւնը, կառուցկին հերթով շօշափում է և միւս կէտերը, այն է՝ կարեոր գերը արտադրութեան մէջ աշխատառի կենցաղի բաժան լինելը արտադրութիւնից, որի մէջ նա զբաղւած է, վերջապէս՝ արտադրելու հասարակական կենտրօնացած, այլ ոչ բաժան—բաժան անհատական միջոցներով աշխատելը: Մինք արդէն տեսանք, որ այդ յատկանիշները կամ բնորոշ են պրօլետարիատի ոչ բոլոր տեսակների համար (ընդունելով իբրև պրօլետարներ այն մարդկանց, որոնք ապրում են իրենց աշխատանքը՝ իբրև ապրանք՝ կապիտալ ունեցողներին վաճառելով), կամ որոշ պայմաններում կարող են յարմարել և գիւղացիութեանը:

Այս բոլոր դիտաղութիւնները և քրօնի, առանց նախնական փորձի, վճռում են կառուցկու համար գիւղացու և պրօլետարի խնդիրը այն մտքով, թէ՝ որպէս տնտեսական կազմի կատէզօրիաներ՝ նրանք ոչ միայն տարբեր են, այլ և շատ կէտերում միմիանց հակառակ: Այստեղից բլիլում է այն, որ համապատասխան տարբերութիւնն ու հակասութիւնը պիտի գոյութիւն ունենայ նոյնպէս և գիւղացու շահների մէջ մի կողմից և պրօլետարի շահների միւս կողմից: Իր այսպէս որոշ կերպով յետոյ է սկսում ապացոյց

¹⁾) «Կապիտալ», հատ. I, էր. 616.

որոնել և շտապում է ստուգել իր դեղուկցիան ինդուկցիայով: Այդ դրութիւնն ճշմարտութիւնը ապացուցելու համար կառուցկին ստիպւած չէ հետո դնալ, «Ճահերի այդ հակառակութիւնը ամենից պարզ ու որոշակի կերպով պիտի արտայայտեի այն գիւղացիների մէջ, որոնք սովորաբար գործ են ածում վարձու բանուրներ, այսինքն՝ խոշոր գիւղացիների մէջ¹⁾):

Սյստեղ մենք տեսնում ենք կառուցկու կողմից ապացուցելու գուտ-փաստաբանական եղանակի մի նոր նմուշ: Քանի որ նա գործ ունէր «պրօլետարիատ» հասկացողութեան հետ, նա աշխատում էր դնել այդ հասկացողութեան մէջ միանգամայն որոշ, յարակից հասկացողութիւններից խստիւ սահմանափակած մի բովանդակութիւն: և այդ բովանդակութիւնը այնքան էր սահմանափակած, որ պրօլետարիատի բազմաթիւ տեսակներ դուրս մնացին, ինչպէս ասում են՝ «կոչւածներ շատ կան, բայց ընտրեալներ քիչ»: Ընդհակառակը, խօսելով գիւղացիութեան մասին, նա ոչ մի այդպիսի բանի մասին հոգ չէ տարել:

Հարց է ծագում, ինչ մաքով է գործ ածում կառուցկին «գիւղացիութիւն» բառը: Կայ միայն երկու ճշտիւ որոշած և գիւղութեան համար պարզ նշանակութիւն. գիւղացիութիւնը կարելի է դիտել իրեւ դաս (օօլովիե), որպէս իրաւաբանական կազմի կատեգորիա, և իրեւ դասակարգ, որպէս անտեսական կազմի կատեգորիա: «Bauernklasse» (գիւղացիական դասակարգ) — այդ տերմինը Մարքս յանախ գործադրում է²⁾) այն նոյն գիւղացիների վերաբերմամբ, որոնց համար «հողը գուտ արտադրութեան գործիք է և որոնց ֆոլմարը տալիս է «Sebstwirtschaft», այսինքն՝ «անմիջական արտադրող—հողագործ» անունը: Այդ գիւղացու անտեսական ընոյթը մեր գիւղացի—բանաստեղծ կոլցովը որոշել է շատ պատկերառը և աջող կերպով. գիւղացին դիմում է իր արօրին ու ձիուն այս խօսքերով. «Ես համ ձեր ծառան եմ, համ էլ տերը»: Եւ, իսկապէս, գիւղացին իր արտադրելու գործիքների «ամէրն ու ծառան է»:

¹⁾ «Die Agrarfrage» (ազգարական հարցը), եր. 308.

²⁾ Տես Մարքսի «Achtzehnte Brumaire» Բրիւմերի 18-ը)

Հարց է ծագում, թէ այս հասկացողութիւններից ո՞րն է միացնում կառուցկին «գիւղացիութիւն», «գիւղացի» բառերի հետ: Իրեւ դաս է ընդունում նա արդեօք գիւղացիութիւնը: Բայց այդ աւելի քան տարօրինակ կը լինէր: Դասային մաքով գիւղացի կարող է լինել և՛ հողագործը, և՛ արհեստագործը, և մանր վաճառականը, և պանդոկատէրը, և խոշոր հողատէրը, և գործարանական բանուրը, և կառապանը, և գոնապանը, և ուսանողը, փիլիսոփայութեան գոկորը, և գեռ էլ, չը գիտեմ, ով: Բայց չէ որ կառուցկին զրում է ոչ թէ իրաւաբանական տեսութիւն, այլ քաղաքատնտեսական. իսկ տնտեսական կողմից «գիւղացիական դասը մի այնպիսի» բարդ կուտակումն է, որ նրա մասին՝ իրեւ մի ամբողջութեան՝ խօսք չի կարող լինել. Իրեւ այդպիսին՝ գիւղացիութիւնը իրաւունքի առարկայ է, այլ ոչ քաղաքատնտեսութեան: Պարզ է, որ մի այդպիսի տնտեսական տեսակէտից՝ խառնուրդի տնտեսական շահերի մասին չէ կարելի խօսել, և համեմատել այդ խառնուրդը տընտեսական կատարիորիա կազմող պրօլետարիատի հետ անհնարին է: Համեմատութեան են դուռը միայն միատեսակ բաները. արշինները չէ կարելի համեմատել փթերի հետ:

Ուրեմն, գուցէ կառուցկին խօսում է գիւղացիութեան մասին երկրորդը, տնտեսականն մտքով: Դարձեալ ոչ, որովհետեւ նրա կարծիքով՝ գիւղացիների թւին են պատկանում նոյնպէս և Grossbauer-ները (խոշոր գիւղացիները), իսկ գրանց սօցիօղիական տեղը, անկասկած, այնպիսիների կողքին չէ, որոնց համար հողը «զուտ արտադրութեան գործիք է», այլ գիւղատնտեսական բուրժուազիայի շարքերում:

Տնտեսական մաքով մինոյնն է, որ դասին է պատկանում հողատէր՝ ազնւականների, մէջանների, վաճառականների, հոգեւրականների թէ գիւղացիների: Եթէ նա իր հողի միջոցով «վաճառականութիւն է անում», նա արդէն պատկանում է բուրժուազասկին, թէկուզ իր ծագումով լինի ամենախական գիւղացի: Եւ հակառակը. ինքնուրոյն արտադրող-գիւղացիների գասակարգին են պատկանում և քաղաքի շրջակայքում ապրող մէջանները, որոնք իրենց «երեսի քըրտինքով» պարապում են հողագործութեամբ ու բանջարաբու-

ծութեամբ, և սակաւահող մեծածուխ գիւղացիները (օճուծօրեցի) և հողաբաժին ստացած հոգեռականները կամ պաշտօնաթող զինուորները, և նոյն իսկ տօլստօյականութեամբ յափշտակւող «հողագործները կրթւած դասակարգից»...

Ի՞նչ մտքով է, վերջապէս, խօսում «գիւղացիների» մասին կառուցին: Յայտնի չէ ուղղակի, թէ ինչ... կամ աւելի ձիշտ ասած՝ նա վերցնում է այդ խօսքը նրա փողոցային, գուեհիկ և անվերջ անորոշ ու առածզական նշանակութեամբ: Այդ նրան հնարաւորութիւն է տալիս տեղաւորել գիւղացիութեան առաջին շարքում «գիւղացիների միջից ելած» ըուրժուաներին և դրանով ապացուցել «գասակարգային հակասութեան» գոյութիւնը գիւղացիութեան և պրօւետարիատի մէջ: Այդ, իհարկէ, ապացուցելու յարմար ու դիւրին եղանակ է. այլ խսդիր է, թէ որքան զիտական է այդ եղանակը: Ի՞նչ կասէիք դուք այն փիլիսոփայի կամ հոգեբանի մասին, որը դատողութիւններ անելով հոգու և մարմնի մէջ գոյութիւն ուշ նեցող յարաբերութեան մասին, վերցնէր այդ երկու տերմինը կամ դրանցից մէկը սովորական, գուեհիկ մտքով, որի համաձայն, օրինակ, քաղցի զգացմունքը վերաբերում է «մարմնին», և միայն բարձր երազանքները՝ «հոգուն»: Դուք, երկի, կասէիք, թէ այդ գուեհիկը վուզգար հոգեբանութիւն, վուզգար փիլիսոփայութիւն է: Այդպէս անա կառուցին էլ ձգտելով ապացոյց գտնել իր յայտարարած «շահերի հակառակութեան» համար, ընկնում է մի ոտքով վուզգար տնտեսութեան, վուզգար մարքսիզմի ըլջանը...

Չը կայ աւելի հեշտ բան, քան պատասխանել այդպիսի պատճառաբանութեանը նման, նոյն իսկ գեռ աւելի ուժեղ գիւղացիական հողերի գրաւով վերցրած պարաքերի աչքի ընկների ձեռքում, ուր զնում են իրենց խնայողութիւնները բանուրները: Այդպիսով, այն տոկոսի աղբերը, որն ստանում է իր պահ տւած փողի համար, վերջ ի վերջոյ գիւղանաբերի», որը իրեւ թէ դորձում է «als Fabrikant» (իբրև

գործարանատէր—ինչպէս ասում է կառուցկին)... Դերերը փոխուում են, հարստահարւողները դառնում են հարստահարիչներ և հակառակը...

Բայց շարունակենք լսել կառուցկուն. նաև բացի «գրութառէր»-ներից՝ (խոշոր գիւղացիներից) պրօւետարների և գիւղացիների շահերի հակասութեան այլ ապացոյց էլ է գտնում: Վերցնենք, ասում է նա, միջակ գիւղացիներին, որոնք ընդհանուր առմամբ գործ չեն ածում վարձու աշխատանք, ապրում են իրենց ձեռքի աշխատանքով, բայց որոնք արտադրում են իրենց մթերքները շուկայի համար: Այստեղ վերանում է հարստահարւողների և հարստահարիչների հակասութիւնը. բայց այստեղ էլ է մնում գեռ այն հակասութիւնը, որը գոյութիւն ունի վարձու բանուրների և շուկայի համար կենսական միջոցներ արտադրողների միջև, այսինքն՝ վաճառողների և գնողների հակասութիւնը»¹⁾:

Շահերի նոր հակառակութիւն! Օ՛, իհարկէ, ամեն մի վաճառող միշտ ուզում է իր ապրանքը կարելին չափ թանգ ծախել, իսկ գնողը՝ կարելիին չափ էժան գնել: Այդ հակասութիւնը ոչ ոք չի բացասիլ: Բայց այն էլ չը պէտք է մոռանալ, որ այլպիսի հակասութիւնը անցնուում է ամբողջ ժամանակակից հասարակութեան միջովը: Այդ հասարակութեան բոլոր անդամները, նոյն իսկ կապիտալիստների և վաճառականների միենոյն դասակարգի անդամները հանդիսանում են միմիանց վերաբերմամբ փոխէփոխ մերժ որպէս գնողներ, մերժ որպէս վաճառողներ: Եւ եթէ այդ հակասութիւնը անհրաժեշտորէն տանելու լինէր դէպի սօցիալական պառակտում, դէպի առանձին դասակարգային բաժանումներ, այն ժամանակ առաջ եւ կած դասակարգերի թիւն աւելի շատ կը լինէր, քան արտադրութեան և առեարի ճիւզերը... Ես, իհարկէ, չեմ ժխտում, որ դասակարգը մի յարաբերական հասկացողութիւն է, որ կապիտալիստական արտադրութեան մի քանի առանձին ճիւզերի միջև կան շահերի ինչ-ինչ շատ լուրջ ընդհարումներ: Ես ասում եմ միայն, որ դա չէ հանդիսանում գեռ իբրև որոշագը-

¹⁾) «Die Agrarfrage» (ագրարական հարցը), ել. 308.

ըող գործօն: Շահերի հակասութիւնը վաճառողի և գնողի միջն ոչ միայն թոյլ է տալիս ընդհանրապէս համաձայնութիւն, այլ և բոլորպին չէ խանգարում մէկին էլ, միւսին էլ լինել միենոյն հասարակական դասակարգի սահմաններում: Չէ՞ որ, եթէ այդ ձեռք դատելու լինենք, այն ժամանակ միենոյն ապրանքը վաճառողների շահերի հակասութիւնը աւելի էական կը լինի, քան գնողների և վաճառողների: Միենոյն ապրանքը վաճառողները մրցակիցներ են, իսկ մրցման մէջ՝ հոմո հոմին լուս, այսինքն՝ մարդը մարդու համար գայլ է: Բանւորները նոյնպէս հանդիսանում են իրքի վաճառողներ որոշ ապրանքի, այն է՝ աշխատանքի, և նոյնպէս մրցում են միմիանց հետ: Այդ չէ խանգարում (այսինքն, իհարկէ, խանգարում է, բայց ոչ այնքան, որ կարողանայ ազգել վճռողական կերպով) նրանց միութեան ու դասակարգային համերաշխութեանը՝ Բացի դրանից բանւոր դասակարգի առանձին խաւերի մէջ էլ ոչ սակաւ տարածայնութիւններ գոյութիւն ունեն: Դրանցով հարուստ է մանւանդ անդիմական նեղ, հին տրէդ—ունիօնիզմի պատմութիւնը: Եւ միայն անգլիականն է միթէ այգալէս... Ահա թէ, օրինակ, ինչ է տառմ իր գերմանական բանւորական շարժման պատմութեան մէջ Մերինդը, որն իր բարեկամ կառուցկու հետ հանդիսանում է իրրե «ամենաառաջապահաներից» մէկը: Մետաղագործական արդիւնապործութեան մէջ աշխատող բանւորների արհեստակցական կազմակերպութիւնների աճումը երկար ժամանակ շատ գանգաղ էր տառջ գնում, «մասամբ այն պատճառով, որ նրանք կազմակերպւել էին այնպէս, որ տարբեր զերը առանձնացրած էին ոչ բաւարար չափով, զրա շնորհիւ ընդհարում առաջցաւ միանգամայն տարբեր, նոյն իսկ հակառակ շահերի մէջ» (Geschichte etc. եր. 325): Միացման սկզբունքը պիտի պայքարի բազմաթիւ բաժան-բաժան անող ազգեցութիւնների հետ: բայց այն, ինչ որ շահերի հակասութիւն է թւում՝ երբ այդ հասկանում ենք նեղ մտքով, դառնում է համերաշխութիւն, երբ նոյնում ենք աւելի լայն, իսկացի և դիտակից կերպով: Այդպէս է մեղալի հակառակ երեսը այն խնդրում, որը վերաբերում է բանւորների մրցման վարձի

Նոյնպիսի «հակառակ երես» կայ նաև գիւղացիների և պրոցեսարների՝ իրքն գնողների և վաճառողների՝ յարաբրութիւնների մէջ, և Կառացկին գիտէ այդ «հակառակ երեսի» մասին: «Բանւոր դասակարգը գիւղատնտեսական արդիւնքների գլխաւոր սպառողն է, որքան տեղի բարձր է բանւորի աշխատավարձը, այնքան աւելի մեծ է նրա գնողական ոյժը, այնքան աւելի սաստիկ է գիւղացիական տնտեսութեան արդիւնքների պահանջը, այնքան աւելի բարեկացող են այդ արդիւնքները վաճառելու պայմանները: Հետեապէս, գիւղացին շահագրգուած է, որ բանւորը բարեկացիկ լինի»:

Իրեն յատուկ գիւղէքտիքական ճարպիկութեամբ կառացկին բանակուի է մզում այդ հայեացքի գէմ: Իհարկէ, ասում է նա, հասարակութիւնը մի բարդ օրգանիզմ է, և այդ օրգանիզմի մէջ չէ կարելի ոչ մի մասը այնպէս շօշափել, որ այդ կողմնակի կերպով չազգի և միւսների վրայ: Բայց եթէ մենք այստեղից հանենք այն եղբակացութիւնը, թէ գիւղացիների և պրօլետարների շահերը համերաշխ են, այդ գէպքում՝ լինելով հետեղողական՝ մենք կը գտնիք մի տմենագուհիկ թէօրեայի, այն է, որ իրը թէ բոլոր շահերի մէջ մի ընդհանուր ներդաշնակութիւն կայ: Չէ՞ որ եթէ այգալէս դատելու լինենք, կարելի կը լինի ասել, թէ կապիտալիստներն էլ պիտի աւելացնեն իրենց բանւորների աշխատավարձը, որովհետեւ դա ներքին շուկան լայնացնելու ամենալաւ միջոցն է: Մեւս կողմից էլ, կարելի է ասել բանւորներին ձեռնառու է, որ կապիտալիստների օգուտը շատ լինի, որովհետեւ որքան օգուտը շատ է, այնքան աւելի է կուտակութիւնները և որի շնորհիւ զարգանում, առաջադիմում է կապիտալիստական հասարակութիւնը. կամ եթէ այգալիս զեր խաղում էլ է նաև այդ ներդաշնակութիւնը,—յամենայն դէպս շատ քիչ չափով. նրանց դասակարգային շահերի անմի-

«Զանազան դասակարգերի շահերի կողմնակի հեռաւոր ներդաշնակութիւնը չէ, որ որոշում է նրանց փոխադարձ յարաբրութիւնները և որի շնորհիւ զարգանում, առաջադիմում է կապիտալիստական հասարակութիւնը. կամ եթէ այգալիս զեր խաղում էլ է նաև այդ ներդաշնակութիւնը,—յամենայն

ջական հակասութիւններն են, որ կանգնած են առաջին տեսում»¹⁾:

Որքան աւելի անմիջական է շահերի միութիւնը—կամ հակասութիւնը, այնքան նա, իհարկէ, աւելի հեշտ է զիտակցում, և ընդհակառակը, որքան նա աւելի կողմնակի ու հեռաւոր է, այնքան աւելի դժւար է զիտակցում: Դա մի աներկբայելի ճշմարտութիւն է: Բայց հէնց միայն դա էլ ճիշտ է կառուցկու վերոյիշեալ դատողութիւնների մէջ:

Նախ և առաջ նա շտապել է, նմանեցնելով զիւղացիների և կապիտալիստների շահերը. և կառուցկին ապացուցում է այդ հետևեալ կերպով. գիւղացիութեան համար օգտաէտ է քաղաքային բանտորների աշխատավարձի բարձր լինելը. կապիտալիստներին էլ ձեռնուու է իրենց արտադրութիւնների շուշկան ընդարձակելու համար բարձրացնել աշխատավարձը: Բայց կառուցկին այստեղ աչքաթող է արել մի փոքր տարբերութիւն, որը տապալում է նրա ամբողջ համեմատութիւնը: Իր ապրանքների վաճառումը յիշեալ ճանապարհով ընդարձակելու համար, գործարանատէրը նախ պիտի իր սեփական գրպանից տայ այն ամբողջ աւելորդ գումարը, որի ջնորհիւ յետոյ լայնանում է իր շուկան: Սակայն այդպիսի գործողութիւնը տւելի վատ է, քան մաղի մէջ ջուր ածելը. իսկապէս, չէ որ աւելի լաւ կը լինէր, եթէ նա այդ գումարով ինքն իրենից գնէր համապատասխան քանակութեամբ ապրանք: Աւելորդ է ասել, որ գիւղացիների և քաղաքային բանտորների յարաբերութիւնների մէջ այդպիսի խոչընդուներ ամեննին չեն սպրդում:

Իհարկէ, եթէ կապիտալիստը կարողանար բարւոքել իր բանտորների դրութիւնը երկնքից ընկնող փողով, այլ ոչ իր գրպանի, նա, անկասկած, ոչ մի բօպէ չէր վարանի դառնալ բարեգործ և, ի դէպ, մեծացնել ներքին շուկայի գնողական ոյժը: Այդպէս, օրինակ, Անգլիայի արդիւնագործական բուրժուացին ձեռքից բաց չը թողեց առիթը և օրէնքի հովանուորութեան տակ առաւ զիւղատնտեսական բանտորներին՝ ընդդէմ հողատէրերի, իսկ վերջինները, իրեւ վրէժ, կատաղի

¹⁾ «Ագրարական հարցը», եր. 309.

ռամկավարականներ դարձան բանտորների վերաբերմամբ: Գործարաններան բանտորներն էլ, ի հարկէ, դէմ չեն կապիտալիստի օգուտի բարձրանալուն, եթէ միայն այդ կատարում է ոչ նոյն իրենց բանտորների հաշվին: Չէ որ, իսկապէս, որքան աւելի է ծաղկում գործարանը, այնքան աւելի զիւրին կարող են բանտորները զիջումներ ստանալ: Որքան աւելի հարուստ է կապիտալիստական երկիրը, այնքան համեմատաբար աւելի լաւ է բանտորների դրութիւնը և այնքան աւելի շատ նրանց տնտեսական կուփի աջողութեան ակնկալութիւնները¹⁾: Զարմանալի չէ այդ պատճառով, որ անգլիական բանտորների մի նշանաւոր մասի մէջ երկար ժամանակ աջողութիւն ունէր նոյն իսկ իմպէրիալիզմը: Անգլիական արդիւնաբերութեանը հարկաւոր են շուկաներ, հարկաւոր է առաջնապաց քաղաքականութիւն այդ շուկաները գրաւելու համար, իսկ ալդ արդիւնաբերութեան դրութեան հետ համաշխարհային շուկայում սերտ կապւած է և անգլիական բանտորի բարօրութիւնը:

Ահա մի քանի գիտողութիւններ նորերումս վերջացած անգլիական պարլամենտական ընտրութիւնների (1900 թւի) հետևանքների վերաբերմամբ. «Եթէ Շօտլանդիան, իրանդիան և գիւղական կենտրոնների մեծամասնութիւնը շարունակում են ձայն տալ մինխստրութեան դէմ, դրա փոխարէն Զէմբէրլինը, ըստ երևութիւն, իր կողմն ունի մեծամասնութիւնը բոլոր մեծ քաղաքներում»—այսպէս է գրում մի ֆրանսիական թերթ (La Petite Republique, 7 օշտ. 1900): Ահա մի փոքրիկ մասնակի լուսաբանութիւն էլ գարձեալ նոյն թերթից. «Իմպէրիալիստները յաղթեցին Շէֆֆիլդում, որտեղ լիբերալ պատգամաւոր բանտոր Մադիսոնը յաղթեց բաւական ստուար մեծամասնութեան կողմից... «Daily Chronicle» վերագրում է այդ հետևանքն այն փաստին, որ Շէֆֆիլդ քաղաքը, որտեղ արտադրում են ահագին բանակութեամբ պողպատէ ապրանքներ, իստ շահագրգուած է թնդանօթներ և պատերազմական պարագաներ պատրաստելու մէջ. այդ է Շէֆֆիլդի բնակիչնե-

¹⁾ Հմմտ., թէ ինչ է ասում այդ առթիւ Զօմբարտ իր «Soziale Bewegung» (սօցիալական շարժումը) գրքում, եր. 30.

րի ջիսգօլովմի¹⁾ պատճառը» (նոյն թերթում, 6 հոկտ. 1900): ինչպէս տեսնում էք, թէկ բանւորներն անմիջապէս ապրանք չեն հանում շուկայ, բայց և այնպէս երբեմն զգում են իրենց խիստ շահագրգուած, որպէս զի այդ ապրանքների վերաբեր մամբ, որոնց արտադրութեան մէջ իրենք աշխատում են, մեծ պահանջ լինի և գներն էլ բարձր լինեն... Շէֆփիլդի այդ գէպ-քը յիշեցնում է ինձ մի այլ նման գէպք, որի մասին պատ-մում է ինքը կառցկին իր «Դասակարգային հակասութիւն-ները 1789 թւին» անունով հետաքրքիր գրւածքի մէջ: Նա մատնացոյց է անում հետեւել տարօրինակ երևոյթը. յետամը-նաց, անկուլտուր վանդէյի հետ միասին կղերական և արքա-յական բէակցիայի կենտրոնը երկար ժամանակ, համարեա քրանսիական մեծ յեղափոխութեան ամբողջ ընթացքում, ե-ղել է ֆրանսիական խոշոր արդիւնաբերական կենտրոն էիօն քաղաքը: Հանկելուկը շատ պարզ է լուծում: Իիօնը կենտրոն էր մետաքսի արդիւնագործութեան, ոսկեթել գործւածքների և այն, և այդ պատճառով աւատական (ֆէօդալական) ազնւա-կանութեան ձարահատեալ գաղթը միրանսիայից շատ սուր նըս-տեց այդ քաղաքին: Եւ բայց ի կօնից, շարունակում է կառց-կին, բաւական թւով գործարանատէրենք և առետրականներ (գլխաւորապէս շքեղութեան առարկաներ վաճառքներ) մեծ ձգուում ունէին գէպի ազնւականութիւնը, որը նրանց ապ-րանքի սպառողն էր: Հէնց գրանով է բացատրւում, որ բուր-ժուագիայի այդ մասը նւիրւած էր հին կարգերին: Այդ են պատմաբան-կառցկու հաղորդած փաստերը, իսկ գօգմատիկ-կառցկին՝ հակառակ առաջինին՝ սարքում է «անմիջական դա-սակարգային հակասութիւն» վաճառողների և գնողների միջն... Սակայն ինչ կօնկը բանի մէջ կարող է արտայայտել հակասութիւնը բանւոր-գնողների և գիւղացի-վաճառողների միջն: Իհարկէ նրանում, որ գիւղացիները կարող են ցանկա-նալ և պահանջել որ իրենց բերքերի գները արհեստական կերպով բարձրանան՝ հովանաւորող մաքսերի և սպառողների

1) «Զինգօ» անւանում են նրանք, որոնք պաշտպանում են նւաճողական քաղաքականութիւնը:

հաշուին սահմանած արտօնութիւնների միջոցով: Աւելի մօտից ըննենք կառցկու թէօրեայի այս վերջին կարեոր ապացոյցը: Նախ և առաջ մատնացոյց անենք հատկալը. հովանաւու-ըող մաքսերի մասին կարող է խօսք լինել միայն այն երկիր-ներում, որոնք հացը ոչ թէ արտահանում են, այլ ներմուծում են. ուրեմն ի նկատի պիտի ունենանք այն երկիրները, որտեղ իսկական գիւղատնտեսական արտադրութիւնը անցել է երկ-րորդ տեղը և չէ կարողանում բաւարարութիւն տալ երկրի ամրող ազգաբնակութեան կարգներին: Հետևապէս, հոչակա-ւոր «հակասութիւնը» նախ և առաջ փակւած է համեմատա-բար նեղ, տեղական սահմաններում և ընդհանուր բնաւորու-թիւն չունի: Այդ գեռ քիչ է. հէնց յատկապէս այն երկիրների համար, որտեղ հողագործութիւնը, ուրեմն և գիւղացիութիւնը ունեն ամենամեծ նշանակութիւնը, այդ երկիրների համար կառցկու գատողութիւնը ոչ մի նշանակութիւն չունի: Այդ առաջին:

Երկրորդ, ոչ այլ ոք, բայց եթէ ինքը կառցկին հենց նոյն «Ազրարական հարցը» գրքի մէջ շատ գեղեցիկ կերպով լուսա-բանել է մի հետաքրքիր և կարեոր հարց. այն է՝ թէ ում համար են, իսկապէս, ձեռնտու ներմուծուղ գիւղատնտեսական բերքերի վրայ գրւած մաքսերը: Նա վճարականապէս այն միաքն է յայտ-նում, որ «գեռ մինչեւ այժմ հովանաւորող մաքսերը գիւղատրի-տեսութեանը ոչ մի անգամ չեն օգնել... եթէ նոյն իսկ հնարաւոր էլ լինէր մի եսանդուն, զօրեղ քաղաքականութիւն՝ ազբարական պրօտիկցիօնիցմի (հովանաւորող քաղաքականութիւն) մտրով, նրա հետևանքները կը ծառայէին իրեն խրախուսանք ոչ թէ գիւղա-տընտեսութեան համար, այլ լոկ հողատիղութեան, այսինքն՝ կը բարձրանար հողի գինը շնորհիւ այն բանի, որ բենտան բարձր աստիճանի վրայ կը պահպանէր... և այդ միայն շարունակ կը ծանրաբեռնէր գիւղատնտեսութիւնը¹⁾: Արեմտեան երօսպայի իսկական աշխատաւոր գիւղացիութիւնը (այլ ոչ թէ նրանից ելած և ենող բուրժուազիան) միշտ զգում է մի ամենաստի-պողական կարիք, որը ընդհանուր է ինչպէս նրա, նոյնպէս և

1) «Ազրարական հարցը», եր. 248.

Նրա արևելեան եղբայրակիցների համար: «Հող է հարկաւոր»... իզուր չէ, որ նորագոյն քաղաքատնտեսներից ոմանք համարում են նոյն իսկ հողի գնի խնդիրը գործազրկութեան՝ խնդրի մի մասնաւոր արտայայտութիւնը, մի ինքնատիպ, փոփոխած ձեր: Հողը գիւղացիների և գիւղական բանտորների համար, մասնաւանդ իրիտ ազգաբնակութիւն ունեցող երկիրներում, միայն իրենց համար վաստակ և գոյութեան միջոցներ ապահովելու մի միջոց է: Գիւղական այն պրօլետարին, որն զբաղւած է միայն տարւայ մի մասը և այդ պատճառով՝ աւելի յարատե աշխատանք գտնելու համար՝ ստիպւած է կամ քաղաք գնալ, կամ հիմնել իր սեփական, թէպէտ և փոքրիկ տնտեսութիւնը, այդպիսի պրօլետարին Գումազլովիչը անւանում է «Bauern-Axolote», որ ազատ թարգմանութեամբ՝ «գիւղացութիւր» կը նշանակի: Հողի սաստիկ պահանջը բարձրացնում է նրա գինն ու կապալարժէքը շատ աւելի, քան այդ հարկաւոր կը համարէր զանազան տնտեսական գիտողութիւններով, և շատ աւելի, քան նոյն ինքը բնական կապիտալացած րենտան է. բացի դրանից, հողի այդ պահանջը կլանում է եկամուտի ահագին մասը, և այդ թուում ոչ միայն այն մասը, որը համապատասխանում է «օգուտին», այլ և յաճախ նոյն իսկ նորմալ աշխատավարձի մի մասը: Ազրարական պրօտեկցիօնիզապիտի ունենայ, որ ըենտան նորից պիտի բարձրանայ, և հողի գնի և կապալարժէքի գիւղացիների համար այնքան ծանր աճում նորից պիտի զարգանայ: Դա, կարծում ենք, աւելի կարեռ է, քան գիւղատնտեսական բերքերի շուկայի աւելի բարձր գները: Զբարձր է մոռանալ, որ այն գիւղացիների առաջին մասը, որոնց մասին այստեղ խօսուում է, արտադրում է գլխաւորապէս ոչ թէ շուկայի, այլ իրենց սեփական գործադութեան համար: Այդ այն չէ, ինչ խոշոր գիւղական արևետիւն ունեցողն է, որը նոյնպէս գործ է աճում իր սեղանակութեամբ մտենում է գործածութեան այն ձեին, որ մենք նկատում ենք քաղաքային արհեստաւորների (կօշկակարների, դերձակների և այլն) մօտ, երբ սրանք նոյնպէս իրենց սեփա-

կան արտադրութիւններն են գործ ածում: Սակաւ չեն պատահում այնպիսի դէպէր, երբ այդ տեսակ գիւղացիները ծախում են իրենց հայը, որպէս զի յետոյ նորից գնեն այդ աւելի թանգ գնով և այդ նորից գնելու նպատակով կատարւած վաճառումի արտաքին անմիտ կեղեւ տակ թագնւած է մի էապէս բոլորովին այլ տնտեսական գործողութիւն: այն է գրամական մի փոխառութիւն, հացահատիկների գրաւով և մի այնպիսի տոկոսով, որը առաջուց յայտնի չէ: այստեղ նոյն իսկ չէ կարելի հաւատացած լինել, արդեօք կաջողւի յետ ստանալ նոյն գրաւադրւած առարկան, թէ աւելի վատը:

Միայն այն մանր գիւղացիները՝ որոնց հողը զբաղեցրած է զանազան յատուկ մշակումներով (специալներ կուլտуր), աւելի շահագրգուած են շուկայի գների մակարդակով. բայց հէնց այդ յատուկ մշակումների բերքերը ամենից քիչ են տուժում օտար, անդրատլանտեան մրցումից, և, հետևապէս, ամենից քիչ են շահագրգուած ներմուծական մաքսերով. ամենախիստ մրցման ենթակայ է հացահատիկային տնտեսութիւնը, իսկ այդ տնտեսութեան մէջ գիւղացիների դերը՝ իրենց սեփական բերքերի սպառողների՝ ամենից մեծ է: Եւ ահա այդ ամբողջ «շահերի հակասութիւնը» յանգում է հետեւալին: բանտորներին ձեռնտու է, որ կենսական մթերքների գները ցածր լինեն (թէն շատ էլ չի հարկաւոր չափաղանցնել բանտորների այդ շահի ինտենսիվութիւնը, որովհետև աշխատավարձը՝ չը նայած իրեն յատուկ յարակայութեան (իներցիա) ոյժին՝ մինչև որոշ աստիճան համակերպում է յիշեալ գների տատանումներին): Աշխատաւոր գիւղացիութեան շատ փոքր մասը շատ քիչ է շահագրգուած կենսական մթերքների շուկայի գների բարձրութիւնով, հետեւապէս և ազգարային հովանաւորող մաքսերով: Միւս կողմից, գիւղացիութեան աւելի մեծ մասին ձեռնտու է, որ կապալավարձն ու հողի գինը ցածր լինեն: Ինքը Կառուցին չի ժխտի, որ աշխատաւոր գիւղացիութեան և խոշոր հողատիրութեան ու գիւղատնտեսութեան շահերի հակասութիւնն աւելի մեծ է, քան իր ընդունած հակառակութիւնը գիւղացիների և բանտորների մէջ, իրենց գնողների և վաճառողների: Սակայն չէ որ գիւղատնտեսական արդիւնքնե-

բի ամեն մի թանգանալը, որը մի կոքըիկ պլիւս է մանր գիւղացու տնտեսութեան համար, մինոյն ժամանակ մի ահաւ պին պլիւս է նրա խոշոր մրցակցի համար: Բայց իմ մրցակցի պլիւսը ինձ համար մինուս է. պարզ չէ միթէ, որ այդ պլիւսի մէջ առանց մնացորդի կորչում-անհետանում է մանր գիւղացու ամբողջ չնչին պլիւսը:

Էլ չեմ խօսում այն բանի մասին, որ արդիւնագործական կապիտալիստները, որոնց ձեռնոտու չեն կենսական մթերքների բարձր գները՝ որովհետև այդ դէպքում բանւորներին էլ պիտի աւելի բարձր վարձ տալ՝ հովանաւորով քարաքականութեան միջոցին իրենց համար էլ են համապատասխան էրվիվալենտ պահանջում: Իրեն խոշոր հասարակական ոյժ՝ նրանք համագույնից պիտի զուրս գայ այդ: Արդիւնագործական արտադրութիւնների սպառողի, ուրեմն նոյնպէս և հէնց նոյն գիւղակրբ յաղթանակում է հովանաւորով սիստեմը, գիւղացու աւել տուածն ընդունակ է երկու, երեք և աւելի անդամ ծածկել այն, ինչ որ նա աւել ստացել է շնորհիւ գիւղատնտեսական արտադրութիւնների բարձր գներին:

Կասկած չը կայ, որ գիւղացին միշտ չէ հասկանում արևատեսական պայմանների այդ ամբողջ բարդ ցանցը, որը պաշաճանոցը որը կարող է շուկայում նրա գրանցան ընէնել, նրա ամար աւելի շօշափելի բան է: Հէնց գրանից էլ օգտաւում ու դրանով էլ պատճառաբանում են պրուսական ազրաբները իրենց յետաղէմ-դեմագոգիական տակտիկը: Նրանք օգտաւում են գիւղացու մթութիւնից և աշխատում են ցանել նրա և քաղաքային բանւորի մէջ թշնամութեան սերմեր: Լաւագոյն ցուն իր գրութիւնը, իր իսկական շահերը, բարձրացնել նրան այդ շահերի սեղ ըմբռնումից դէպի աւելի լայն ըմբռնումը: Չէ որ գործարանական բանւորն էլ ի ընէ չէ «դիալէքտիկօրէն մտածում»: Նրան, այդ բանւորին ոսքի է բարձրացը և աւելի քան կէս դարի կուլտուրական-կրթական ազդեցութիւնը, որն

իրագործում էր «Das Bündniss des Denkenden und Leidenden» (մտածողների և տառապողների միութիւնը):

Բայց հնթաղրենք մի առ ժամանակ, որ կառցէին արդարացի է, հնթաղրենք, որ բարձր գներն ու հովանաւորով սիստեմը գիւղացուն անմիջական օգուտ են հասցնում: Զգտելով բարձր գների, պահանջելով արտօնութիւններ իր արտադրութիւնների համար, գիւղացին գործում է ոչ թէ թիւբ, հասկացած շահի ազդեցութեան տակ, այլ ճիշտ հասկացած, բայց նեղ, բացառիկ շահի ազդեցութեան տակ, որն ստիպում է նրան թշնամաբար ընդհարւել իր բանւոր-մուշտարինների մասսայի հետ:

Եթէ նոյն իսկ ընդունէինք այդ, միթէ գտած կը լինէինք մեր որոնած սկզբունքային տարբերութիւնը բանւորի և գիւղացու միջև. ամեննեխն ոչ:

Մենք արդէն տեսանք, որ բանւորը, թէկ ինքն անմիջապէս շուկայ չէ հանում իր արտադրած ապրանքները, այնուամենայնիւ կարող է շատ խիստ շահագրգռւած լինել, որ այդ ապրանքները լաւ գին ունենան: Ոչ միայն մաքսը, այլ նոյն իսկ պատերազմը-եթէ գրանց շնորհիւ զները բարձրանում են-կարող են համապատասխանել բանւորի նեղ, անմիջական շահերին: Այդ գեռ քիչ է, բանւորն ինքն էլ է անմիջապէս շուկայ հանում մի առանձին ապրանք՝ իր աշխատանքը, իր մկանային ու ներդային ոյժը: Եւ ինչպէս գիւղացին կարող է անսարդար արտօնութիւններ պահանջել իր ապրանքի համար, այնպէս էլ կարող է պահանջել այդ և բանւորը: Օրինակ, իշտալացինների մրցումը շատ գգալի է Շվեյցարիայում, հարաւային ֆրանսիայում: Տեղական բանւորները սաստիկ գժգոն են գրանից. յաճախ նրանց և իտալացինների մէջ պատահում են գժտութիւններ, կուի ու ծեծ: Ինչպէս գիւղացուն օգտակար է թւում (թէպէտ և իզուր) պաշտպանել ազգային շուկան աւելի էժան օտարերկրեայ հայի ներմուծումից, այնպէս էլ բանւոր-պրօլետարներին օգտակար է թւում (և, իսկապէս, այդ ելլորի պրօլետարներին դա ամիջապէս օգտաւէտ է) պաշտպանել ազգային բանւորական շուկան օտարերկրեայ աւելի աժան բանւորական ոյժի ներմուծումից: Բանւորը նոյն-

պէս կարող է պահանջել, արտօնութիւններ և նոյն իսկ մենաշնորհ տղամարդու աշխատանքի համար ընդդէմ կնոջ աշխատանքի մրցակցութեան:

Իր «Ազգաբական հարցի» մի տեղում կառւցկին ինքը է խօսում բանւորական շարժման այն տիպի մասին, որը նա անւանում է «գուտ-գործնական», և որի էութիւնը կայանում է միայն բանւոր դասակարգի նեղ, անմիջական շահերին ծառայելու մէջ: «Հասարակական զարգացումը,—ասում է կառւցկին,—մեզ համար նոյն խոկ աւելի բարձր է, քան պրօլետարիատի շահերը. մենք չենք կարող պաշտպանել այնպիսի պրօլետարական շահեր, որոնք խոչընդոտ են հանդիսանում հասարակական զարգացմանը»¹⁾:

Ինարկէ, Կառուցիխն խսկոյն աւելացնում է, որ ընդհանրապէս այդպիսի հակասութիւն չը կայ, որ մէկի և միւսի (այսինքն պրօլետարական և հասարակական) շահերն ընդհանրապէս զուգաղիպում են. սակայն, մասնաւորապէս, «պրօլետարիատի ներսում կարելի է գտնել ամենատարբեր խաւեր. զոյութիւն ունի բանւորական արիստոկրատիա... որը շահերի նկատմամբ չափազանց հեջտ հակասութեան մէջ է մտնում պրօլետարիատի ընդհանուր մասսայի հետ»: Այդ բանւորական արիստոկրատիան առանձնապէս հակւած է դէպի «զուտ-գործական» տակտիկան: Մնացած տարրերը, որոնք զիւղից քաղաք են գնում, այն է՝ իրենց որակով ոչ իսկական բանւորները (ու եվալիֆակտորները, մրցող-բանւորները արտասահմանից, կին-բանւորուհիները՝ դրանք բոլորը գրգռում են «պրօլետարիատի ընտիր տարրերի» թշնամական վիրաբերմունքը: Լայն համերաշխութեան, շահերի ներդաշնակութեան զգացմունքը միշտ չէ արտացոլում «անմիջական», նեղ շահի ձայնի միջին:

Երբ խօսքը գիւղացիների և բանտորների յարաբերութիւնների մասին էր, Կառուցկին պնդում էր, որ շահերի հետց անմիջական հակասութիւններն են, այլ ոչ նրանց հեռաւոր համերաշխութիւնը, որ հանդիսանում են իրեն վճռող, որոշող մօմէնտ: Ենելով այդ տեսակէտից, նա պիտի բանտորական

¹⁾ «Ազգաբանական հարցը», էլք. 318.

արիստօկրատիայի վրայ էլ խաչ դնէր, ինչպէս և գիւղացիների վրայ: Բայց չէ... Սովորած, իսկական բանուորները՝ չը նայած իրենց արիստօկրատական ձևերին՝ իրենց կուլտուրական մակարդակով, տոկունութեամբ, բանիմացութեամբ և այլն ներկայացնում են մի շատ արժեքաւոր տարր¹⁾: Զարմանալի չէ, որ նրանց համար կառւցկու մօտ գտնւում է մի այլ արշին, քան գիւղացիների համար...

Այդ է կառցկու գատողութիւնը: Անհրաժեշտ է սպառը, որ գիւղացիների և բանուրների յարաբերութիւնները քննելիս՝ կառցկին միանգամայն բաց է թողել էլի երկու կէտ, որպնցում նրանց շահերի համերաշխութիւնը ներկայացնում է բաւականաչափ: Անմիջական:

Նախ աշխատավաբձի ընդհանուր մակերևոյթի բարձրութիւնը չափազանց կարևոր է ամեն մի գիւղացիական ընտանիքի համար, որովհետև նա, այդ ընտանիքը, ոչ սակաւ դիմում է կողմանակի վաստակի, զրսի աշխատանքի, նոյն թւում և գործարանական աշխատանքի: Կամ դիւղացիական ընտանիքի առանձին անդամները, չը խցելով իրենց կապը նրա հետ, յատկապէս նւիրում են իրենց գործարանական աշխատանքին, կամ գնում են բոլոր անդամները փոխէփոխ:

Աշխատավարձի դրութիւնը արտադրութեան զանազան ճիւղերում միշտ ներկայացնում է մի շատ բազմազան, բազմեցած պատկեր, այդ չէ խանգարում մի ընդհանուր մակարդակի գոյութեանը, այնպէս, ինչպէս որ ալիքների տարրութերում ները չեն խանգարում ծոփի ջրի ընդհանուր մակերևոյթի գոյութեանը։ Առանձին՝ ալիքների տատանումների և բարձրութեան աստիճանը որոշում է իր մասնաւոր պայմաններով, բայց և ընդհանուր մակերևոյթին ունի իր առանձին շարժումը, որը հետեւանք է աւելի ընդհանուր պատճառների։ Այդ գործը է՝ աշխատանքի վարձատրութեան և մի այլ իր որակով աւելի բարձր կամ ցածր աշխատանքի վարձատրութեան մէջ կայ որոշ

¹⁾ Իսկապէս, եթէ մարդ աւելի լուրջ քննի, այն ժամանակակիցը՝ պրօլետարիատի շարքերում, որտեղից կառցկին արտաքսել է շատ կարգի բանուորներ, մնում է, գլուխապէս, հէնց այդ «բանուորական արիստօկրատիան»:

յարաբերականութիւն, ունի ունի պահպանութելու ձգուում բոլոր վարձարութիւնների միաժամանակ վերև կամ ներքև շարժւելու դէպուում: Ուրիշ խօսքով, զանազան ճիւղերի բանւորական աշխատավարձերի մէջ գոյութիւն ունի որոշ փոխադարձ աղղեցութիւն: Եւ այդ պատճառով ամեն ժամանակ, երբ գիւղացին դիմում է որ և է կողմնակի, օժանդակիչ աշխատանքի, նա զգում է իր վրայ բոլոր ազգային աշխատավարձերի ներկայ դրութիւն, ներկայ մակարդակի օգուտները կամ վասները:

Երկրորդ, բանւորը չէ կարող անտարբեր լինել դէպի գիւղական բարօրութեան աստիճանը, որովհետեւ ոչ մի բան այնքան վատ չէ ազգում իր աշխատավարձի չափի վրայ, որքան «բանւորական պահեստի բանակի» որակական և քանակական կազմը: Մինև այժմ այդ բանակը կազմուում էր գիլաւորապէս գիւղական տարբերից, երկրագործութիւնից փախչող ներից: Արբան աւելի էր առաջ գնում գիւղացիների քայլայում, այնքան աւելի մեծ թափով էին քաղաքներ հոսում ազատ բանւորական ձեռքեր, այնքան աւելի էր սրում մրցումը: Աշխատավարձն սկսում էր հակեւել դէպի ներքե, և հարկաւոր էին լինում հերոսական ջանքեր՝ աշխատաւորին իր առաջւայ տափանի վրայ պահելու համար: Այդ կողմից գիւղացիների պրօլետանուրական գաղաքելը, անկասկած, ձեռնտու է քաղաքային բանւորներին:

Բոլոր վերոյիշեալ դիտողութիւնների հիման վրայ մենք չենք կարող համաձայնել կառուցկու վերջնական եղրակացութիւնների հետ. «Գիւղացիների և պրօլետարների համար ընդհանուր է միայն կենսական մակերեսովթը, միայն բարեկեցութեան աստիճանը, այլ ոչ նրանց շահերը», ուստի—եթէ մի կողմը թողւնթացքում հնարաւոր են ամենատարբեր դասակարգերի միջև —եթէ մի կողմը թողնենք այդ, ընդհանուր օրէնքը կը լինի ոյն, որ պատճութեան մէջ բանւորն ու գիւղացին պիտի գնան թշնամի դառնալ¹⁾:

¹⁾ «Ագրարական հարցը» եր. 310.

Դա միայն աւելի զգոյշ ձեն է արտայատելու այն, ինչ որ մի քանի այլ գերմանական մարքսիստներ յայտնում են աւելի պարզ ու անկեղծօրէն. օրինակ, «խիւական գիւղացիները միշտ մեր թշնամիները կը լինեն», «գիւղացիները, որպէս գասակարգ, պիտի թշնամարար մեր գէմ կանգնած լինեն»: Այդպիսի հայեցքը վերադարձ է դէպի այն հին, մեռած տեսակէտը, որի վրայ Մարքսն ու էնգելսը կանգնած էին քառասնական թւականներին, երբ նրանք համարում էին գիւղացիները անպայման յետաղէմ տարր, իսկ էնգելսը նոյն իսկ գուշակում էր, որ բանւորութիւնը որոշ հեռաւոր ապագայում ստիպւած պիտի լինի «Ճնշել ընդհանուր գիւղացիական պատերազմը». այդ այն ժամանակ էր, երբ նոյն էնգելսի գրչով դեռ զբան չէին հետեւու խօսքերը. «Յիւղպիսով, մենք վճռականապէս կանգնում ենք մանր գիւղացու կողմը...»:

Սրանով մենք վերջացնում ենք ««Bauer und Proletarier» (գիւղացին և բանւորը) գլխի հետազօտութիւնը, բայց մեզ մնում է գես քննել կառուցկու «Bauernschutz und Arbeiterschutz» (գիւղացիների և բանւորների պաշտպանութիւն) փոքրիկ յօդւածը, որպէս զի մենք վերջնականապէս համոզւենք, թէ ինչ աստիճանի է զաւածանում կառուցկին ամենատարբական արդարութեան զգացմունքին, հէնց որ նա սկսում է խօսել գիւղացիների և նրանց յարաբերութիւնների մասին դէպի բանւորները: Այդ յօդւածը մի կլասսիք նմուշ է այն բանի, թէ ինչպէս նեղ գոկտրինի ազգեցութեան տակ խելօք, տաղանդաւոր, զարգացած, մարդասէր իդէալիզմով համակւած հեղինակը կորցնում է իրականութեան ամեն մի զգացմունք, ցոյց է տավա մի ինչ որ անհասկանալի բարոյական չոր ու ցամաքութիւն, կենդանի, սրտագին սիրոյ բացակայութիւն դէպի մարդկարայը, տառապող աշխատաւորը, որը կարիք ունի այդպիսի սիրոյ, կարիք ունի եռանգուն կարեկցութեան, թերևս աւելի նոյն իսկ, քան ով իցէ...

Մեր մի քանի ընկերները, ասում է կառուցկին, կարծում են, որ եթէ մենք պաշտպանում ենք մի շարք միջոցներ, որոնք ներկայ կապիտալիստական հասարակութեան մէջ հովանակու-

ըում ու պաշտպանում են բանւորի շահերը, մենք նոյն կերպ պիտի վերաբերենք և դէպի այն միջոցները, որոնք գիւղացիների շահերն են պաշտպանում: Կառուցկին ինքը, ընդհակառակը, կարծում է, որ գիւղացիների շահերի պաշտպանութիւնն ու բանւորների շահերի պաշտպանութիւնը այնպիսի բաներ են, որոնք սկզբունքի տեսակէտից էտպէս տարրեր են և նոյն իսկ կատարեալ հակառակութեան աստիճանի անզուգելի են:

Լսենք ապացոյցները: «Երբ մենք հանդէս ենք գալիս պաշտպանելու բանւորներին,—ասում է կառուցկին,—մենք դըրանով հակառակութեան մէջ ենք մտնում բոլոր այլ հասարակական ուղղութիւնների և խմբերի հետ: Եթէ նրանցից մի քանիսը դնում էլ են իրենց գրօշակների վրայ բանւորների պաշտպանութիւնը, այդ առաջ է գալիս միայն մեր մրցման ճնշումի տակ, որպէս մի ակամայ գործողութիւն, առանց բաւարարութիւն... Սյլ է գիւղացիներին պաշտպանելու գործը: Սյլ պահանջում են բոլոր այլ կուսակցութիւնները. և այդ ասպարէզում մենք ոչ թէ հակառակութեան, այլ նախանձորութեան, մրցման մէջ ենք մտնում այդ կուսակցութիւնների հետ, որոնք կամենում են պահպանել ներկայ տնտեսական դրութիւնը: Եւ այդ անելով, մենք մտնում ենք այնպիսի մրցման մէջ, որ կարողանայինք տալ աւելի քիչ, քան ոմանք մեր հակառակորդներից, որովհետև մենք պիտի հաշւի առնենք պրօետարիատի շահերը, որոնք մեր հակառակորդների վրայ ոչ մի պարտք չեն դնում... Մի դէպքում մենք ելնում ենք պաշտպանելու մի այնպիսի գործ, որն ատելի է մեր հակառակորդներին, միւս դէպքում մենք մրցել ենք սկսում հաւասար նպատակի համար մեր առաջնայի թշնամու հետ, որին չեն ծանրաբեռնում ոչ տեսական տարակուսանքները, ոչ էլ բանւոր դասակարգի շահերը հաշւի առնելու անհրաժեշտութիւնը»:

Խորին զարմանքով կամգ ենք առնում կառուցկու այս խօսքերի առաջ: Երկի այն պատճառով, որ մենք բոլորովին չենք ճանաչում Քերմանիան. մենք չէինք էլ երեակայում, որ այդ երկիրը իսկական գիւղացիական Արկադիա է (երանելի ուղղակի էլ գրւած է բոլոր կուսակցութիւնները—հէնց այդպէս ուղղակի շահերը հաշւի առնելու անհրաժեշտութիւնը»:

միանց հետ, գիւղացիներին պաշտպանելու ձգտումնց դրդւած: Եւ մրցում են ոչ այնպէս, ինչպէս բանւորներին պաշտպանելիս, այլ «ուրիշ կերպ», հետևապէս ոչ թէ նուրբ, խորամանկ քաղաքագիտութիւնից դրդւած, ոչ թէ «ակամայ», թոյլ կերպով, «առանց լրջութեան», այլ միանգամայն լուրջ վերաբերւով գործին: Սյլ գեռ քիչ է. այդ մրցման մէջ նրանք կարող են տալ գիւղացիներին աւելի շատ, քան կառուցկին և ինկ., որովհետև «ծանրաբեռնում», չեն ոչ տեսական տարակուսանքներով, ոչ էլ բանւոր դասակարգի շահերը հաշւի առնելու անհրաժեշտութեամբ»:

Սակայն, միթէ նրանք ստիպւած չեն լինում հաշւի առնել այլ դասակարգերի շահերը, ասենք, օրինակ՝ «ոչ բանւորների». այդ շահերը չեն «ծանրաբեռնում», չեն «կաշկանդում» գիւղացիներին պաշտպանելու գործում:

Դժւար է առաջին հայեացքից հաւատալ, որ այդ բոլորը գրած լինի մի այնպիսի մարդ, ինչպէս կառուցկին, և ես՝ իմ սեփական շահից դրդւած՝ անհրաժեշտ եմ գտնում բերել ծանօթութեան մէջ նրա այդ յայտարարութիւնից ամենատարօրինակների բնագիրը և լւանալով ձեռքերս, քաշւել մի կողմը¹⁾:

Սյլպէս է՝ կառուցկու ասելով «գիւղացիական շահերի պաշտպանութեան» և «բանւորական շահերի պաշտպանութեան» տարրերութիւնը: Աւելի ևս էսկան է երկրորդ տարերութիւնը:

«Ինչի՞ է ձգտում բանւորի շահերի մեր հովանաւորութիւնը»—հարցնում է կառուցկին. «արդեօք այն բանին, որ պետութիւնը պաշտպանի բանւորին տնտեսական տեսակէտից: Երբէք ոչ. պետութեան միջամտութիւնը տնտեսական շրջանառութեան մէջ, յօդուտ բանւորի տնտեսական գոյութեան, մենք յայտարարում ենք ապարդիւն, նոյն իսկ վտանգաւոր, մինչ

1) «Anders steht es mit dem Bauernschutz. Diesen verlangen alle anderen Parteien (ամենից հետաքրքիրն այն է, որ նուրազիրը բնագրին է!), auf diesem Gebiete treten wir nicht in Gegensatz, sondern in Konkurrenz... in ein Wettrennen zum gleichen Ziel mit dem sonstigen Gegner, den weder theoretische Skrupel, noch Rücksichten auf die arbeitende Klassen belasten.

որ կայ կապիտալիզմի ընդհանուր տիրապետութիւն¹⁾... Մենք միշտ արհամարհել ենք աժան ժողովրդականութիւն ձեռք բերելը այնպիսի միջոցներով, ինչպէս բանտորի տնտեսական գոյութիւնը պաշտպանելու պահանջը. օրինակ, պետութեան կողմից ապահոված նւազագոյն աշխատավարձ, իրաւունք աշխատանքի վրայ, արդիւնաբերական ընկերութիւնների պետական պաշտպանութիւնը... Իսկ այն, ինչ կարելի է և պիտի պահպանել «բանտորների պաշտպանութեան» միջոցով—ու աշխատաւորի ֆիզիքական եւ բարոյական անօնսաւորութիւնն է»:

«Իսկ ինչի՞ է, ընդհակառակը, ձգում «գիւղացիների պաշտպանութիւնը»: Արդեօք այդ նշանակում է գիւղացու ֆիզիքական և բարոյական անձնաւորութեան պահպանութիւնը: Արդեօք պահանջում են տարածել գործարաններն օրէնսդրութիւնը գիւղացիական ընտանիքների վրայ էլ ինչպէս ուղում են տարածել այդ տնային արդիւնաբերութեան վրայ: Արդեօք ուղում են արգելել գիւղացուն քերթել իր երեխաների կաշին, յանձնել իր կողմը վտանգաւոր աշխատանքներ, վերջապէս՝ բանել մինչև կատարեալ ուժապառութիւնը: Արդեօք ուղում են հրահանգել գիւղացու ընակարանի համար օդի նւազագոյն խորանարդացին չափը, մաքրութեան աստիճանը և այլն: Գիւղացիներին այդ կերպով պաշտպանելուն մենք, թերևս, ուրախութեամբ համաձայնէինք: Այլ հարց է, թէ որքան կը նպաստէր այդ մեզ ձեռք բերել գիւղացիական շրջանում ժողովրդականութիւն: Բայց մեր «գիւղացիների պաշտպանութեան» կողմնակիցները չեն ուղում միանգամայն այդ գիտենալ. այն, ինչ որ նրանք են պահանջում, ու ամենին գիւղացիների ֆիզիքական եւ բարոյական անօնսաւորութեան պաշտպանութիւնը չէ, այլ նրանց տնտեսական գոյութեան պաշտպանութիւնը: Ուրեմն, մենք պիտի անենք գիւղաշխատարիատի համար այն, ինչ որ չենք կարող անել նոյն իսկ պրօ-

վերլուծենք ինչպէս հարկն է կառցկու այդ փաստաբանութիւնը:

Նախ, ճիշտ է արդեօք, որ իրը թէ «բանտորների պաշտպանութեան» առարկան միայն նրանց «ֆիզիքական և բարոյական անձնաւորութիւնն է», այլ ոչ «տնտեսական գոյութիւնը»: Բայց միթէ հրաժարւել «նւազագոյն աշխատավարձից» և «իրաւունք աշխատանքի վրայ» հին, կուի—Բլանական գաղափարից՝ կը նշանաւի ժխաել ամեն մի «տնտեսական» պաշտպանութիւն: Ապա պետական ապահովագրութիւնը պատահարների, ծերութեան գէպքում: Արդեօք այդ պահպանում է բանտորի միայն ֆիզիքական և բարոյական անձնաւորութիւնը, թէ աւելի շատ. միթէ այդ չէ վարձաստրումնրան տնտեսապէս այն վխափի համար, որ հասցրել են «ֆիզիքական և բարոյական անձնաւորութեանը» կապիտալիստական մեքենայի պնիւները: Միթէ գառամեալներին և գործի անընդունակ դարձաներին արևող կենսաթոշակը նրանց հենց նոյն «տնտեսական գոյութեան» որոշ ապահովութեան միջոց չէ: Անցկացնել փոքր ի շատէ հետեւղաբար այն հայեցքը, որ կապիտալիստական կարգերի ժամանակ «պետութեան միջամտութիւնը տնտեսական շրջանառութեան մէջ, յօդուա բանտորի տնտեսական գոյութեան, ապարդիւն և նոյնիւկ վտանգաւոր է»—անցկացնել այդ հայեցքը՝ կը նշանաւի ընկնել գործնականապէս մի ինքնակերպ մանչեստրականութեան¹⁾ մէջ, գնել այդ վերջինի մի նոր տեսակի, այն է՝ «սօցիալ-մանչեստրականութեան» սկլիզբը:

Ես արդէն չեմ խօսում այն բանի մասին, որ երեխաների աշխատանքի արգելումը և կանանց ու տղամարդկանց աշխատանքի սահմանափակումը, որոնք՝ ըստ կառցկու հանդիսանում են որպէս մի օրինակ «բանտորի ֆիզիքական և բարոյական անձնաւորութեան պաշտպանութեան», —ունեն այն հետեւնքն էլ, որ կրծատում են մրցումը բանտորների մէջ և բարձրացնում նւազագոյն աշխատավարձը. և այդպէս աշխատավարձը աւելի

¹⁾ Մանչեստրականութիւնն այն ուղղութիւնն է տնտեսական քաղաքականութեան մէջ, որ գէմ է պետութեան միջամտութեանը ժողովրդի տնտեսական կեանքի մէջ և կողմնակից է աղատ մրցման:

) Wir erklären das staatliche Eingreifen in das ökonomische Getriebe zugunsten der wirtschaftlichen Existenz des Arbeiters für vergeblich, ja gefährlich, solange der Kapitalismus in Staat und Gesellschaft herrscht, die Produktionsmittel Privateigentum der Kapitalisten sind.

հաստատ է լինում, քան եթէ պետութեան կողմից որոշած լինէր, որ գործնական տեսակէտից ուղղակի անիրազործելի է: Եւ եթէ այդպիսով պետական գործարանական օրէնսդրութիւնը կողմանակի կերպով ժառայում է բանւորների և «տնտեսական գոյութեան պաշտպանութեանը», կարծում եմ, դա նրա աւելորդ պիտին է, այլ ոչ թէ անխուսափելի չարիքը, որի հետ կարելի է հաշտուել միայն «հոգեկան ու բարոյական անձնաւորութեան պաշտպանութիւնից» սպասող բարիքների համար:

Յետոյ, ենթադրենք, որ հրաժարում ենք ընկերութիւններին տրող պետական օժանդակութիւնից, բայց միթէ այդ ընկերութիւնները առանց օժանդակութեան տալիս են նախ և առաջ որ և է ապահովութիւն ոչ տնտեսական գոյութեանը: Միթէ բոլոր այդ «ժողովրդական» տները, ինչպէս, օրինակ, բրիտանիկ տունը, կամ այնպիսի ձեռնարկութիւններ, ինչպէս իրենց բանւորներին պատկանող ապակու գործարանը Ալբիում, նոյն իսկ բոլոր ամենահամեստ սպառողական ընկերութիւնները, —միթէ դրանք բոլորը որոշ չափով չեն դարձնում բանւորներին առևտրական և տնտեսական ձեռնարկութիւնների «տէրեր»: Ի՞նչ երկարացնենք: Ես ինձ չեմ դասում «տնտեսական մատերիալիստների» կարգին, բայց խոստովանում եմ, որ հասարական կեանքի բոլոր կողմերի մէջ գոյութիւն ունեցող կապը թուում է ինձ այնքան ուժեղ, որ ես չեմ կարողանում երևակայել, թէ ինչպէս կարելի է փոքր ի շատէ լուրջ կերպով պահպանել բանւորի «Փիզիքական և բարոյական անձնաւորութիւնը», չը պահպանելով միենոյն ժամանակ, որքան այդ հնարաւոր է, նոյնպէս և նրա տնտեսական գոյութիւնը: Բայց ինչպէս կարող է երևակայել այդ բանը կառուցին, որի համար տնտեսականութիւնը (ԷԿՈНОՄԻԿԱ) ամեն բան որոշող հիմքն է, իսկ մնացած այլ բաները՝ միայն մակաշինութիւններ են:

Բայց հէսց «տնտեսական» պաշտպանութիւնը «Փիզիքարոյական» պաշտպանութիւնից զատելու վրայ էլ հնաւած է կառուցկու ամբողջ երկրորդ փաստաբանութիւնը «գիւղացիութեան պաշտպանութեան» դէմ: Ելակէտն ընկնելով, ընկնում է ինարկէ և եղրակացութիւնը:

Սակայն մենք պիտի քննենք զիւղացիութեան «Փիզիքարոյական» պաշտպանութեան և այն միջոցները, որոնց հետ կառուցկին «ուրախութեամբ» համաձայնում է: Այդ «ուրախութեան» մէջ ծածկւած է հետանքի մի բաւական մեծ զօգա կառուցկու հակառակորդների, այն է՝ զիւղացիանէր—մարքսիստների հասցէին, որովհետեւ «այլ հարց է, թէ որքան կարող են այդ միջոցները նպաստել նրանց ձեռք բերելու զիւղացիութեան մէջ ժողովրդականութիւն»:

Առաջին կէտ արգելումը գիւղացուն չափազանց հարցստանարել իր ընտանիքի անդամներին, մանաւանդ երեխաներին:

Կառուցկու այդ առաջարկը նորից և նորից ընդգծում է այն, որ գիւղացին Untergenreiter է (ձեռնարկող). որ եթէ նա միջոց չէ ունենում ուրիշի բանւորին հարստահարելու, նա այնուամենայնիւ ոչ պակաս, քան մի գործարանատէր, հարստահարում է նրանց, ում կարող է. չը կան ուրիշները, ուստի նա կը հարստահարի իր սեփական ընտանիքի անդամներին:

Այդպիսով, նախ և առաջ հարկաւոր է պաշտպանել ոչ թէ նրան, այլ նրա դէմ ուրիշներին: Աւաղ. Կառուցկու վերցրած օրինակը աշող չէ և ոչինչ չէ տառեմ յատկապէս գիւղացու դէմ: Գործարանական բանւորը ձեռնարկող չէ, սակայն նա իրեկ հայր հնարաւորութիւն է ունենում երբեմն հարստահարելու իր երեխաներին, այն էլ յամենայն դէպս գիւղացուց ոչ պակաս:

Լսենք, թէ ինչ է տառեմ այդ մասին ինքը Մարքսը: Խօսելով իր «Կապիտալի» առաջին հատորում այն բանի մասին, որ մեքենաների ներմուծումը գալձնում է մկանային ոյժն աւելորդ և հետևապէս հնարաւոր է լինում կանանց և երեխաների աշխատանքի գործադրութիւնը, Մարքսը շարունակում է. «ապրանքների փոխանակութեան հիմնական պայմանը ենթադրում է, որ բանւորն ու կապիտալիստը հանդիպում են, որպէս ազգա անհատներ... իսկ այժմ կապիտալը գնում է գեռահասներին և կամ նրանց, որոնք լիակատար իրաւունքներ չունեն: Առաջ բանւորը ծախում էր իր սեփական բանւորական ոյժը, որը նա տրամադրում էր, որպէս մի կառարելապէս ազգա

անձնաւորութիւն։ Այժմ նա ծալսում է կենոջն ու երեխաներին, նա դառնում է զերեվաճառ... Այդ սակարգութեան ժամանակ տեղի ունեցող տեսարաններն ու խօսակցութիւնները ուղղակի վրդովեցուցիչ են... բանւոր-ծնողների վրդովեցուցիչ հակումները յիշեցնում են ստրկավաճառներին¹⁾։ Այդ պատճառով գործարանական օրէնսդրութիւնը «ատիպւած էր լինում ազդարարել երեխաների իրաւունքները։ Դժբաղդարար,—ասւած է Gh. Empf. Comm. 1866 թւի վերջնական հաշվետութեան մէջ,—բոլոր վկաների ցուցմունքներն ասում են, որ երկու սեռի երեխաներն էլ պաշտպանութեան կարիք ունեն ամենից շատ հէնց իրենց ծնողների կամայականութեան դէմ։ Երեխաների աշխատանքի սիստեմի ընդհանրապէս և ընտանեկան աշխատանքինը մասնաւորապէս՝ պահպանում է նրանով, որ ծնողներն ունեն իրենց գեռահաս երեխաների վերաբերմամբ անկօնարու, կամայական, սանձարձակ իշխանութիւն... Ծնողների իրաւունքը երեխաների վրայ չը պիտի համնի այն առարձանի, որ դարձնէին նրանց սոսկ մեքենաներ՝ այս կամ այլ քանակութեամբ շաբաթավարձ ստանալու նպատակով... Այդ պատճառով երեխաներն ու անչափահամները իրաւունք ունեն ստանալու օրէնսդրական կողմից պաշտպանութիւն ծնողական իշխանութիւնը ի չարը գործ դնելու դէմ, որովհետեւ դա վաղաժամ քայլայում է նրանց ֆիզիքական ոյժերը և իշեցնում նրանց բարօյապէս ու մտաւորապէս»²⁾։ Գործարանական օրէնսդրութեան մէջ համապատասխան յօդւած մտցնելուց յետոյ իսկ, Անգլիայի մի քանի տեղերում հետևեալն էր նկատում։ օրէնքը զանց առնելու նպատակով մի տեսակ սիստեմ էր դարձրած՝ զեղծումների միջոցով՝ երեխաների տարիքը չափաղացնելլ, և այդ «կապիտալիստի շահագործելու» տեսչին և նոյն իրենց ծնողների վաստակի կարիքին բաւարարութիւն տալու համար»³⁾։

Ուրեմն, այս, որ գիւղացին կարող է իր սեփական էլե

¹⁾ «Կապիտալ», համ. I, էլ. 346—347.

²) «Կապիտալ», I, Եր., 428.

³⁾ Եղին տեղում, էլլ. 347.

Խաների և կնոջ «կաշխն քերթել», դեռ հետեւանքն չէ յատկա-
պէս այն բանի, որ նա գիւղացի է: Եւ դա պիտի վերագրել
ոչ նրա «սեփականութեան ֆանատիկոսութեանը», իբրև մանր
արտադրողի: Միակ պատճառն այստեղ այն դաւը կարիքն է,
որ հաւասարապէս ազգում է ինչպէս նրա, նոյնպէս և պրօլե-
տարի վրայ: Այդ կողմէից Մարքսի վերոյիշեալ խօսքերն էլ ո-
տոնած գրութեան մէջ, գժւար չէ իհարկէ նշաւակել «վրագովե-
տոնեալ գրութեան մէջ, գժւար չէ իհարկէ նշաւակել «վրագովե-
տոնեալ գրութեան մէջ» այն բանոր-հայրերի (նոյնպէս և գիւղացի-հայ-
տակի տենչը) այն բանոր-հայրերի, ինչպէս և գիւղացի-հայ-
րերի), որոնք իրենց կանացն ու երեխաներին կենդանի մեքե-
նաներ են գարձնում:

Բայց չէ որ, իսկապէս մեր այդպէս հնչտ խօսութ բառ
կան մեծ չափով կախւած է այն բանից, որ մենք գժւարանում
ենք գնել մեզ նրանց տեղը, հասկանալ, խորապէս զգալ նրանց
գրութեան ամբողջ տրագիզմը: Միթէ, յիրաւի, նրանց օտար
է ծնողական սիրոյ այն բնագիրը գէպի իր զաւակը, որն օտար
չէ նոյն իսկ վայրի գաղանին: Իհարկէ, առանձին բարոյական
այլանդակութիւնները հնարաւոր են, բայց չէ որ մեր խօսքը
ընդհանուր, մասսայական բնաւորութիւն ունեցող երկոյթների
մասին է, այլ ոչ բացառութիւնների: Իսկ միթէ ընդհանուր
է այն, որ հայրերը իրենց սեփական բարօրութիւնը հիմ-
որէնք է այն, որ հայրերը իրենց զաւակների աշխատան-
նում են առանց այլեայլութեան իրենց զաւակների աշխատան-
քի վրայ: Աւելի ճիշտ չէ՞ր լինի արդիօք ասել, որ ինդիրն
այստեղ ամբողջ ընտանիքի—այդ թւում և նոյն իրենց երե-
ախների—բարօրութեանը՝ կամ նոյն իսկ ոչ թէ բարօրութեանը,
խաների—

այլ ուղղակի գոյութեամս է զարդ և այդ
«Վաստակի տեսչը»! Որպիսի գառն հեղանք են այդ
խօսքերը աղքատի համար! Ոչ, երբ բանը հասնում է սեփա-
կան որդիները սարուղների համան վաճառելուն, այդ գէպըում
կան որդիները սարուղների համան վաճառելուն, այլ լոկ կինդանի մնա-
ստիպւած ես մտածել ոչ թէ վաստակի, այլ լոկ կինդանի մնա-
լու մասին...

Այդ իհարկէ չէ նշանակում, որ չէ ամրգութեան առաջակա պահանջութիւնը, ու այս է հարց նել երեխաների իրաւունքները. ընդհակառակը, շատ է հարց կաւոր. և, օրինակ, ուսումը պարտաւորիչ անելու օրէնքը ներկաւոր.

կայանում է որպէս մի միջոց երեխաների ֆիզիքական և բարոյական անձնաւորութիւնը փրկելու: Զէ կարելի միայն դրանով սահմանափակւեն, չէ կարելի խլել աղքատից գոյութեան կուի մի միջոցը և հրաժարաւել տալ նրան մի ուրիշը, այն է՝ հրաժարաւել նրան տնտեսապէս օգնելուց, համաձայն կառւցկու սօցիալ-մանչեստրականութեան: Ցոյց տւէք գիւղացուն լաւագոյն վիճակի համար վարւող կուփ մի այլ ելք, մի այլ միջոց, այն ժամանակ այլ բան է... Եւ գործարանական բանւորներն էլ, եթէ ըստ գանձերի իրենց հինգ տնտեսապէս օգնելու այլ միջոցներ, մինչեւ այժմ «ստրկավաճառութիւն անելիս կը լինէին» և կասէին բոլոր ֆիւանտրոպներին. «հեռացրէք ձեր ձեռքերը»

Հետաքրքիր է գիւղացուն՝ որպէս «ֆիզիքական և բարոյական անձնաւորութեան»՝ պաշտպանելու երկրորդ կէտը, երկրորդ ձեւը, կառւցկու մեթօդով. «արգելել գիւղացուն տանջել իրեն չափազանց աշխատանքով և հասնել կատարեալ ուժասպառութեան»: Այդ, իհարկէ, շատ լաւ է, գլխաւորը, շատ պարզ միջոց է. նոյնքան պարզ, որքան և այն հրահանգները, որ տեղ է հիւանդացած աղքատ-բանւորին նրա մօտ հրաւիրւած բժիշկը, ահա այդ հրահանգները. «զրօննել, հանգստանալ, կառքով ման գալ, ուտել թարմ, առողջ կերակուներ»: Իսկ երբ հիւանդը տեսց բժշկին մի անտեղի հարց. «ապա ինչով ապրեմ», գիտնական պարզնը միանգամայն տրամարանօրէնս պատասխանեց, որ այդ արդէն իրեն չէ վերաբերւում: Ոչ թէ բժշկի, այլ հինց իր բժշկւողի. գործն է գանել մի այնպիսի աշխատանք, որը թոյլ կը տար կատարել բժշկական գիտութեան բոլոր հրահանգները... Այդպէս է խօսում և կառւցկին: Գիւղացու գրութիւնը, իսկապէս, թշւառ է. բայց դա չէ նշանակում, թէ հարկաւոր է նրան օգնել: Ի՞նչ կարիք կայ կարկատելու քանդող տունը, որից հարկաւոր է ուղղակի դուրս գալ և նոր տուն շինել:

«Հողագործութեան մէջ մանը արտադրութեան պահպանելը, — ասում է կառւցկի, — դա աղքարնակութեան այլասերման ամենալաւ միջոցն է. այդ պատճառով մենք ոչ մի հիմք չունենք գեռ մեր կողմիցն էլ պահպանելու այդ թշւառ գոյութիւնը»: Մի բան է մոռանում կառւցկին. միթէ հեշտ է գիւ-

ղացու համար — իհարկէ, ոչ առանձին անհատի, այլ մասսայի — փոխարինել այդ գոյութիւնը մի այլ աւելի լաւ բանով. և արդեօք մասսայական պրօլետարացման ժամանակ ստիպւած չեն լինիլ գիւղացիներից շատերը բաժանւել ոչ միայն «թշւառ գոյութիւնից», այլ և առհասարակ երկրային գոյութիւնից...

Բայց գիւղացու ամբողջ «բացառապէս ֆիզիքա-բարոյական պաշտպանութեան» մարգարիտը այնուամենայնիւ երրորդ կէտն է. «սահմանել նրա (գիւղացու) բնակարանի օդի խորանարդային քանակութեան նւազագոյն չափը, մաքրութիւնը և այլն»:

Ես գժւարանում եմ խօսք գտնել քննադատելու համար... Լինում են այնպիսի ոտանաւորներ, որոնց վերաբերմամբ պահողիա գրեն անհնարին է. այդ ոտանաւորները հէնց իրենք իրենց ամենալաւ պարօդիաներն են... Այստեղ, երեկի, կոյրն էլ կը տեսնի, թէ որքան տարբեր է կառւցկու չսփը գիւղացու և բանւորի համար: Իսկապէս, «օդի, լոյսի մաքրութեան նւազագոյն քանակութեան» բացակայութիւնը նկատելի է բանւորների բնակարաններումն էլ. այդ դեռ քիչ յիշեալ պակասութիւնը յաճախ ընդունում է այնպիսի սպառնական չափեր, որ աճում դառնում է մի ահագին, յատուկ խնդիր: որին վաղուց տրւած է և առանձին անուն, այն է՝ «Wohnungsfrage» (բնակարանի հարց):

Այդ խնդրի լուծման համար աշխատում են շատերը, աշխատել է և ինքը կառւցկին. շատ միջոցներ են հարստած եղել, բայց դեռ ոչ ոք գլխի չէ ընկել լուծելու այդ խնդիրը պարզ կերպով, առանց այլայլութեան, գաւառական պրիստաների մեթօդով, այն է՝ «հրամայել» բնակարանական վատ պայմանների զոհերին իրենց, որ նրանց տները մաքուր լինեն, այնքան լոյս, այնքան օդ լինի, որքան հրամանագրաւած է բժշկական վարչութեան կողմից և այլն: Բայց չէ որ մենք խօսում ենք ոչ թէ քաղաքային բանւորների, այլ գիւղացիների մասին, և ահա ինչու այդպիսի մի պաշտպանութեան մենք ուրախութեամբ կը համաձայնենք»:

Ես վախենում եմ, սակայն, որ մէկը կարող է եղբակացնել այստեղից, թէ կառւցկին իսկապէս բարոյապէս չոր ու

անարդար մարդ է, կամ մի «գիտնական պարոն է» վերոյիշեալ կօմիքական բժշկի նման։ Բացի զրանից, ես վախենում եմ, որ իմ քննադատական նկատողութիւնների տօնն ու ընաւորութիւնը կարող են ամրապնդել այդպիսի վերաբերմունքը դէպի կառուցին։ Եւ ես շտապում եմ ասելու, որ այդ կը լինէր խորապէս անարդարացի։ Կառուցին ամեննեխն այդպէս «կօմիք» չէ, կառուցին գիտնական մարդ է բառի ոչ թէ հեղնական, այլ լուրջ մտքով։ Կառուցին, իրրե լայն իդէալիստ, անկասկած, բարոյական տեսակէտից շատ բարձր է սովորական մակերևոյթից։ Նա միայն տրամարանօրէն—ճետևողական է, և որովհետեւ նրա ելակէտը ճիշտ չէ, ուստի նա գալիս է աւելի քան տարօրինակ եղրակացութիւնների...

Բայց փորձեցէք դատել կառուցկուն ոչ թէ ձեր, այլ իր տեսակէտից։ Մտարերէք, որ կառուցկու համար գիւղացին մի Unternehmer, ալ Կապիտալիստ, ալ Fabrikant (մի ձեռնարկող է, որպէս կապիտալիստ, որպէս գործարանատէր)։ Մի բայց միայն համաձայնէք նրա հետ, և նրա գործնական եղրակացութիւնները ոչ միայն վայրենի չեն թւիլ, ոչ միայն բնական ու հասկանալի կը լինեն, այլ և տրամարանութեան կանոնների տեսակէտից միայն այդ եղրակացութիւններն են հնարաւոր։ Կառուցին ցանկանում է միայն տարածել գիւղի վրայ էլ գործարանական օրէնսդրութիւնը։ Նա թելադրում է ձեռնարկողներն, կապիտալիստներին որոշ միջոցներ, այն է՝ նւազագոյն բանուրական օր, լրյու և ող բնակարանների համար, մաքրութիւն և այլն։ Գիւղացին ինքն է իր կապիտալիստը, ինքն էլ ձեռնարկող է։ Անա այդ գիւղացին է, որ պարտաւորւած կը լինի, ինչպէս բոլոր ձեռնարկողները, համաձայն նրանանողների բանհցնել իր բանուրներին, այսինքն չէսց իրեն, իր կնոջն ու երեխաներին, որոշ ժամանակից ոչ աւելի և վերաշինել իր բնականը գիտութեան բոլոր կանոնների համեմատ (գուցէ էլք բան պահանջւի նրանից, օրինակ, կազմել իր «ձեռնարկողական օգուտից» կապիտալ ապահովագրելու գործելու անընդունակ դարձածների, զպրոցների, հիւանդանոցների համար...): Իսկ ինչ կերպ կազդի այդ նրա վրայ, —թերեւ հարցնէք գուք։ Ե՞ս, թող ինչպէս ուղում է ազդի։ միթէ, յիրաւի, քիչ կան-

այնպիսի ձեռնարկողներ՝ խոշոր էլ, մանր էլ՝ որոնք քայլքայւում են կամ կանգնած են սնանկութեան շէմքում։ Այս կամ այն գործարանատէրը կարող է մահկանացուներից ամենաթշշւառը լինել, որը հազիւ է ծայրը ծայրին հասցնում, խրում է պարտքի մէջ, վերջապէս քաղցած է մնում։ բայց դա դեռ չէ նշանակում, որ նրա արհեստանոցում այլ ևս չը պիտի գործեն գործարանական օրէնքները, որ նրան թոյլ պիտի տրւի կարգի բերել իր գործերը իր բանուրների հաշւով։

Հնդունելով այդ տեսակէտը գիւղացու վերաբերմք, մենք կը ստանանք հետեւեալ անպայման—տրամարանական եղրափակութիւնը։ Եթ կարելի թոյլ տալ գիւղացուն, որպէս ձեռնարկողի, որ նա, խոշոր արտիւնաբերութեան հետ մրցելիս, պահպանի իրեն իր՝ որպէս բանուրի՝ հաշւով։ կամ այլ հէնց իր, կառուցկու խօսքերով սասած՝ «պաշտպաննել զիւղացուն, իր ընեւ բանուրի, կը նշանակէ քայրայել նրան, իրըն հողատիրոջ»։

Հնց դրանով մենք բոլորովին մօտեցանք երրորդ կէտին, որը, կառուցկու կարծիքով, նոյնակէս զանազանում է բանուրների պաշտպանութիւնը գիւղացիների պաշտպանութիւնից։ Բանուրների օրէնսդրական պաշտպանութիւնը ամենալաւ միջոցն է հեռացնելու ճանապարհից այնպիսի արտադրութիւններ, որոնք տեխնիկայի նկատմամբ կանգնած չեն իրենց ժամանակի բարձրութեան վրայ և կարող են պահպաննել միայն բանուրների չափազանց զահագործման չնորհիւ։ Գործարանական օրէնսդրութիւնը մի հզօր գործօն է արդիւնաբերական առաջադիմութեան, գեռ աւելի—կապիտալիզմի առաջադիմութեան¹⁾։

Այլ բան է գիւղացիութիւնը։ Ի՞նչն է սպասնում նրա գոյութեանը։ «Բոս երեսութին, տնտեսական յարաբերութիւնների զարգացումը, որը բոլոր այն երկիրներում, որտեղ ար-

1) Հմմտ. Մարքս, «Կապիտալ», հատ. I, եր. 417. «Բայց եթէ գործարանական օրէնքը արհեստական կերպով նպաստում է մանուֆակտուրայի արտադրութեանը՝ արագ գործարանային դանաւու, նա, այդ օրէնքը, միենոյն ժամանակ փութացնում է ինչպէս մաեր տեսնութիւնների խորտակումը, այնպէս և կապիտալի կենտրոնացումը սակաւարիւ ձեռներում, շնորհիւ կապիտալի մեծ ծախքերի անհրաժեշտութեան»։

տադրութիւնը կատարւում է ժամանակակից հղանակով, ընթառում է օրինաչափ, միևնոյն ընթացքով... եթէ գիւղացիների պաշտպանութիւնը կարող է ունենալ որ և է միտք, դա միայն այն է, որ նա կը հանդիսանայ որպէս խոշնդու անտեսական զարգացման»:

Կառուցկու այս դատողութիւնը նախ և առաջ հիմնած է՝ ինչպէս մի ապացուցւած ճշմարտութեան՝ այն դրութեան վրայ, 1) որ անտեսական զարգացումը կարող է կատարել բոլոր երկիրներում և արտադրութեան բոլոր ճիւղերում մի ձեւով միայն, այն է՝ կապիտալիստական. 2) որ ինչպէս արդիւնագործութեան, այնպէս և հողագործութեան մէջ գոյութիւն ունի «մի կապիտալիզմ», որը զարգանում է օրինաչափ, որոշ մասշտաբով. 3) որ, վերջապէս, գիւղացիական անտեսութիւնը ընդունակ չէ ոչ մի պայմանում զարգացնելու իրենից ինքնուրոյն առաջադէմ ձգտում, տենդենց: Կառուցկին ենում է այս դրութիւններից, որպէս արդիւն ապացուցւածներից:

Ինչ վերաբերում է ինձ, ես համաձայն չեմ նրա հետ: Ես, ընդհակառակը, հիմնում եմ իմ ասածները երեք միանգամայն տարրեր գրութիւնների վրայ. կապիտալիստական էլոլիւցիայի շրջաններն ունեն զանազան տեղական կամ ազգային տիպեր, որոնք կախւած են երկրի դրութիւնից համաշխարհային շուշկայում, նրա բնած տեղից աշխատանքի միջազգային բաժանման սիստեմի մէջ, նրա անտեսական զարգացման ուղին ենելու ժամանակից և, վերջապէս, նրանից, թէ որքան ուժեղ են գեռ այն հետքերը, որ մնացել են հին պատմական գոյացումներից (Փօրմացիա): Իսկ ինչ վերաբերում է արտադրութեան առանձին ճիւղերին, այստեղ նկատում է, որ հողագործութեան մէջ աւելի, քան մի այլ ճիւղում, կապիտալիստական ծեւլը գերիշուում է բովանդակութեան վրայ, կապիտալիզմի հարստահարիչ, քայլքայիչ կողմերը պատմական-ստեղծագործական կողմերի վրայ: Եթէ ոյժ տրւի գործակցական կազմակերպութիւններին, ներքեից համայնականացում կատարւի և նոյն իրենց հողատէրերի նախաձեռնութեամբ աշխատանքի և սեփականութեան վերաբերմամբ մացւի ընկերակցական սկզբունքը, այն ժամանակ հնարաւոր է (կապիտալիստականի հետ միասին) գիւ-

դատնտեսութեան և ոչ կապիտալիստական էլոլիւցիան: «Եւ այդ էլոլիւցիան, որ ներկայում ճնշւած է անտեսական շրջանում տիրող «կուպօնական ոգու» ապականող ազդեցութեամբ, իսկ տեղապէս նեխած իրաւական կարգերով, այդ էլոլիւցիան առաջ կը գնայ ամրող թափով, երբ պատմութեան կշեռքի վրայ աշխատաւոր տարրերի նշանակութիւնն աւելի ծանր կը գայ, քան տրամագծօրէն—հակառակ տարրերի ոյթը»: Մանրամասն հետազոտութեանների այդ երեք վիճելի կէտերը այստեղ, իհարկէ, անտեղի է¹⁾:

Այդ պատճառով քննենք այստեղ միայն մի հարց. ճիշտ է արդիօք, որ գիւղացիներին պաշտպանելը չէ կարող նպաստել անտեսական զարգացմանը, եթէ նոյն իսկ ընդունենք այդ զարգացումը պարզապէս իրրե անտեսութեան բացիօնալից զարգացիա²⁾ կապիտալիստական ձեռվ: Չէ որ այդպիսի բացիօնական կապիտալիստակարեւոր խոչընդուներից մէկը կայանում է նրանում, որ մակերեսային կապիտալիստական շահագործումը իր զանազան ձեերով շատ դիւրին և օգտակատ է, ինչպէս, օրինակ՝ կապալազների ամենանընական բարձրացումը, կապալամիջոցների կրճատումը, վաշխառութիւնը, «գիւղար ժամանակաները» գիւղացու հացով սպեկուլեացիաներ կատարելը, գիւղացիների աժան աշխատանքից օգտւելը, որոնց համար վարձելը միայն իրրե «օժանդակութիւն» է ծառայում, այլ ոչ գոյութեան հիմնական աղբիւր: Նոյն նշանակութիւնն ունի և հողատէրերի կամայականութիւնը, որոնք երբեմն հողը անտառների են յատկացնում միայն որսորդութեան նպատակով և այլն:

Ուրեմն, չը նայած, որ արտադրութիւնը չէ ձեսփոխւում, կապիտալը այնուամենայնիւ կուտակում է: Կան սակայն մի շարք միջոցներ, որոնք կարող էին վերացնել «կապիտալի կուտակման» այդ գիւրին եղանակը և որոնք ահապին առաջադիր:

¹⁾ Այդ սիւթին են նւելրւած իմ մի շարք յօդւածները «Русск. Богоатчево» ամսագրի մէջ, 1901 թ. (կապիտալիստական և ազգարական էլոլիւցիայի տիպերը):

²⁾ Տնտեսութեանը խելացի, նպատակայարմար ընթացք տալը:

մական նշանակութիւն կունենային գիւղատնտեսութեան համար: Ահա այդ միջոցները, կապալապայմանները կարգաւորելը այն մտքով, որ կապալագինը վճարւէր բացառապէս տնտեսութեան զուտ արգիւնքից¹⁾, կապալառուներին վարձատրելը հողը բարելաւելու համար, պետութեան կողմից փոխառութիւն սահմանելը, իբրև մի միջոց վաշխառութիւնն ու սպեկուլեացիաները խափանելու. բայցի դրանից կարեոր է ապահովել հողով ու արտադրելու միջոցներով գիւղացիական ընկերութիւններն ու համայնքները, գրաւելով դրա համար այն հողերը, որ ընկած են դատարկ կամ վատ են մշակուում մասնաւոր սեփականատէրերի կողմից:

Հողագործութեան մէջ այդ միջոցները անհնարին կը դարձէին կապիտալիզմի վատագոյն մակարուծական (պարագիտային) ձևերը, և այդպիսով կենսունակութիւն կունենային միայն այն կապիտալիստական անտեսութիւնները, որոնք պահպանում են իրենց գոյութիւնը հողագործութեան լացիօնալիզացիայի շնորհիւ: Աւելին կասենք. նրանք կը դնէին բռնոր խոչըր անտեսութիւնների առաջ հետեւել գիլեմմը. բացիօնալիզացիա կամ ոչնչացում! Եւ որ չափով որ կապիտալիզմը կարող է գոյութեան հիմք (raison d'être) ունենալ, այն չափով նա կարող է հանդէս գալ, որպէս ստեղծագործօն և այդ չափով էլ միայն նա կը զարգանայ:

Միւս կողմից էլ մանր անտեսութիւնները, ազատւելով շահագործման կոպիտ, նախնական ձևերի ձնշումից, նոյնպէս կարող էին ազատորէն զարգացնել իրենց պօտենցիալ ոյժերը, անարգել փորձել անտեսական զարգացման և նոր ձեեր ընդունելու իրենց ընդունակութիւնը: Այդ արգէն վաղուց է հասկացել աշխատանքի իդէօլոգների մեծամասնութիւնը զանազան երկիրներում, որոնք և մշակել են մի շարք «ագրարական ծրագիրներ» յիշեալ ողով: Այդ ծրագիրների պակասութիւնը,

¹⁾ Զուտ արգիւնք պիտի հաշւել այն գումարը, որը կը մնայ ընդհանուր արգիւնքից, եթէ վերջինից հանհնք՝ բայցի մշական կապիտալի ծախքերից՝ նոյնպէս և անմիջական աշխատողների նօրմալ աշխատավարձը և կապալառուի ապրուսի համար անհրաժեշտ գումարը:

իմ կարծիքով, կայանում է միայն նրանց կիսատութեան մէջ: Նրանք կարծես վախենում են՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ վշտացնել անտեսական էւօլիցիան, վախենում են ստեղծել իրենց ոյժերը ներածին չափ, մի լայն հիմք, որի շնորհիւ կարող լինէին գիտակցօրէն մղել աշխատաւոր գիւղացիութիւնը, առանց մտցնելու նրան կապիտալիստական կաթսայի մէջ, գեղանց մամայացրած սեփականութեան և աշխատանքի ձեերը:

Այդպէս ենք մտածում մենք: Այլ է սակայն կառցկու կարծիքը: Տրամաբանօրէն առաջնորդելով իր սկզբունքային հայեցակէտով, որը բայցի «մի կապիտալիզմից» ճանաչում է միայն նրա ճանապարհը փակող «հնացած» ձեերը, կառցկին համում է իր վերջնական եղրակացութեանը, իր բոլոր տեսական հետեւողութիւնների գործնականութեանը: «Այդպիսով, չը կայ աւելի սխալ բան, քան վերջին վանկերի «Bauernschutz—Arbeiterschutz» համահնչին լինելուց եղրակացնել, որ իբր թէ գիւղացիներին պաշտպանելը նշանակում է բանուորների պաշտպանութեան ընդհանուր գաղափարը անցկացնել արգիւնագործութիւնից գիւղատնտեսութեան վրայ: Կացնել արգիւնագործութիւնից գիւղատնտեսութիւնը, իրապէս, Ընդհակառակը, գիւղացիների պաշտպանութիւնը, տրամադօրէն հակառակ է բանուորների պաշտպանութեանը և վերջինին միանգամայն ներհակ:

Ի՞նչ կարելի է ասել սրա մասին: Finis coronat opus. (Վախճանը պասկում է գործը)...

Պատահմամբ չէ, որ մենք կառցկուն ենք ընտրել, իբրև ներկայացուցի այն տեսակէտի, որը մեր կարծիքով չափազանց միակողմանի և նեղ է: Մենք վերցրինք նրան, ոչ միայն իբր միակողմանի և նեղ է: Մեր կողմանից առաջ մարդու, ըստ աշքի ընկնող տաղանդի, խելքի և կրթութեան տէր մարդու, և ոչ միայն այն պատճառով, որ նա այս բօպէիս ճանաչւած է գերմանական մարքսիզմի մէջ գոյութիւն ունենալուի գերմանական մարքսիզմի մէջ գոյութիւն ունենալուի գերմանական հոգով այն հոսանքի, որն արգէն վաղուց է անցել սուսական հոցով այն հոսանքի, որն արգէն վաղուց է անցել սուսական հոցով այն հոսանքի: Ճիշտ է, բնօրինակը (օրգիւնալ) միշտ աւելի վերապի վրայ: Ճիշտ է, բնօրինակը միշտ աւելի գերազանցէնը, ևս առաւել, որ ոչ միշտ և ոչ բոլոր պատճէնները լաւ են կատարւում. բայց միայն այդ գեռ չէր պատճէնները:

արդարացնիլ այն, որ մենք գնայինք արտասահման և այնտեղ որոնէինք այն տեսակէտի մեկնութիւնը, որը կարող ենք գըտնել և մեր տանը:

Ոչ. ինդրի յատուկ-գերմանական ձեւակերպումն ունի այն հոգեկան առաւելութիւնը, որ կատարեալ ու ամփոփ է, մինչդեռ ոռուսական ձեւակերպումը չունի այդ յատկութիւնները, և չի էլ կարող ունենալ շնորհիւ բոլոր պայմանների: Բանը նրանումն է, որ մեր բոլոր վէճերը սովորաբար ունենում են չափազանց տեսական և վելացական բնաւորութիւն. նրանք զուրկ են կենդանի կապից գործնական կեանքի հետ, և այդ պատճառով նրանց եղանակացութիւնները միս ու արիւն չեն դառնում, չեն հասցնում գործնական ընթացքի պարզ ու որոշ փոփոխման:

Այդպէս չէ Գերմանիայում: Կառուցկու կամ նրա ընկերներից որ և է մեկի ձայնը, որն այսօր հնչում է կուսակցութեան համագումարում կամ միայն արձագանք է գտնում թերերի էջերում, վաղը կանգնում է երես առ երես անմիջական կեանքի դիմաց լանդուագում կամ բայխստագում, երբ այնտեղ քննում է մի որ և է օրինագիծ, որն անմիջապէս վերաբերում է գիւղացի ազգարնակութեան շահերին: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում ամեն մի տեսական միտք անպատճառ պիտի կշռագատւած լինի այնպէս, որ նրա բոլոր գործնական եղանակացութիւնները ու հետեանքները միանգամային պարզ լինեն:

Եւ այդ պատճառով, Կառուցկուն լսելուց յետոյ, մենք կարող ենք ընդգրկել նոր տեսակէտն իր ամբողջ ծաւալով: Զը կայ ոչ մի անորոշութիւն, ոչ մի թերութիւն. ամեն բան ասած է: Ես գիտեմ ոչ միայն այն, թէ ինչ կերպարանք ունի նա տեսական կանոնաւորութեան ու համաշափութեան կողմից, այլ և այն, թէ ինչ բանի է նա պարտաւորեցնում: Կառուցկու անձնական յատկութիւններն աւելի քան նպաստում են այդ բանին: Տըամարանական հետեւողականութիւնը, անողոք, անվախ հետեւողականութիւնը, որը կանգ չէ առնում նոյն իսկ ըստ երեսութիւն, ամենաօրինական մարդկային զգացմունքների և համակրութիւնների առողջ, եթէ սրանք փակում են սկզբունքի յաղթանակի ձամբան, — հենց այդ հետեւողականութիւնն է, որ կազմում է Կառուց-

կու ոյժը: Սակայն, միաժամանակ և ոյժը, և՛ թուլութիւնը... Ոյժը, — որովհեակ դա հնի ու նորի մի հաւաքողական խառնուրդ չէ, այլ իսկապէս մի և ամբողջական սիստեմ, որը կարծէս գրանիտի մի ամբողջ կտորից կերտած լինի: Թուլութիւնը, — որովհեակ լինել հետեւողական, չիմք ունենալով մի սխալ տեսակէտ, կը նշանակի կատարել իր հայեացքների վերաբերմամբ մի սպանիչ *reductio ad absurdum* (կատարեալ անհեթեթութեան յանգել):

Միայն երկու տեսակէտների այդպիսի ամբողջական և գործնական զուգագնելն է, որ հնարաւոր է դարձնում ընտրել գիտակցօրէն նրանցից մէկը: Եւ, ձգելով մի յետադարձ հայեացք մեր տրամաբանօրէն անցած ամբողջ ուղիի վրայ, մենք յայտարարում ենք լիակատար համոզմունքով և եռանդով. ոչ, մենք վճռականապէս ժխտում ենք մեր հին, փորձւած բանաձեի այդպիսի սրբազրութիւնը, բանաձեի, որը աւելի քան քառորդ դար առաջ ազգաբարել է Ն. Կ. Միխայլօվսկի: Անա այդ բանաձել՝ ժողովրդի շահերը, որպէս աշխատաւոր մասսաների ամբողջութեան, որոնք մեզ համար ժողովրդու են հանգիստանում ուղիղ այն չափով, որ չափով որ մարմնացնում ու ներկայացնում են աշխատանքի սկզբունքը: Մենք մնում ենք հաւատարիմ այդ բանաձեին, որովհեակ նրանում աւելի և լայն տեսական իսկութիւն կայ, և կօնկրէտ գործնական ճշմարտութիւն և — մարդկայնութիւն! ...

ՀԱՐԴԱՎՈՐ

ԳՐԱ

Կարդալոց առաջ անհրաժեշտ է ուղղել նետենալ

Գ. Ռ Ի Պ Ա Կ Ն Ե Ռ Ը

Տպածէ

Պիտի լինի

Երևան Տող

10	15	(վերհից) կաղմի մէջ յարաբերութիւնը	կաղմի յարաբերութիւնը
15	6	(վերհից) ընկերակ- ցութիւնների և կա- պակցութիւնների	գործակցութիւնների և ընկե- րակցութիւնների
16	3	(վերհից) ընկերակ- ցական	գործակցութեան
"	8	(վերհից) ընկերակ- ցութեան	գործակցութեան
17	13	(ներքեցից) սրին	որն
25	20	(վերհից) կատարում է կատարել	կատարում է՝ կատարել
28	1	(վերհից) Մարքսի	Մարքս
"	11	(վերհից) գրայ	գրայ
29	26	(վերհից) վճռում են	վճռական են
32	1	(վերհից) մեծածուխ	մենածուխ
33	20	(վերհից) անցնուում է	անցնում է
34	1	(ներքեցից) վարձի հա- մար	վարձին
45	20	(վերհից) դրում են	գնում են
46	13	(վերհից) մինե	մինչե
48	1	(ներքեցից) բոլոր	բոլոր
50	3	(ներքեցից) gefährlich	gefährlich
"	2	(ներքեցից) Cesellschaft	Gesellschaft
54	8	(վերհից) Ch.	Gh.
"	12	(վերհից) աշխատան- քի սիստեմի	աշխատանքի անսահման հարա- տահարման սիստեմի
"	20	(վերհից) օրէնսդր-	օրէնսդրութեան
55	1	(վերհից) հետևանքն	հետևանք
56	9	(վերհից) չը գտնէիք	չը գտնէիք
57	4	(ներքեցից) այդպիսի	այդպիսի
61	6	(վերհից) տարրերի	տարրերի
"	7	(վերհից) տարրերի	տարրերի
63	11	(վերհից) միայ	միայ
64	5	(վերհից) հոգեկան	միայ
"	10	(ներքեցից) ասած	միայ



ZUUR-ԱՐԱ. CCP
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0201204

